Միեր Հակոբյան

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐ

(Մոռացված մի արքայատոհմ)

Երևան
Հեղինակային Հրատարակություն
2012

Գիրքը նվիրվում է Հայկյան տոմարի ընդունման 4500 ամյակին

Հակոբյան Մհեր

Հայկազունիներ – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2012 – 64 էջ:

Գրքում հեղինակը փաստագրական հարուստ նյութի և պատմա-համեմատական հստակ վերլուծության կիրառմամբ ցույց է տալիս մինչ այժմ հիմնականում վիպական հռչակված Հայկազունիների տոհմի պատմականությունը, ուրվագծվում է վերջինիս իրական տեղն ու դերը տարածաշրջանի պատմության համայնապատկերում: Հիմնավորվում է, որ, որոշակի ճշգրտումներով, այնուհանդերձ պատմական են ոչ միայն Հայկազունի տոհմին պատկանող արքաները, այլ նաև այն, որ իրականությանը համապատասխանում են նաև Միքայել Չամչյանի կողմից մատնանշված՝ նրանց գահակալության տարիները:

Աշխատանքը կոչված է ցույց տալու Հայկազունիների փառահեղ տոհմի իրական տեղն ու դերը Հայոց հնագույն պատմության համայնապատկերում, ինչպես նաև համեստ մի փորձ է՝ ուղղված Հայոց հնագույն պատմության կարևորագույն դրվագներից մեկի վերականգնմանը:

Գիրքը կարող է հետաքրքրել ինչպես մասնագետներին, այնպես էլ բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են Հայոց հնագույն պատմությամբ:

© Մ. Հակոբյան, 2012թ.

Նախաբան

Հայերն ապրել են Հայկական լեռնաշխարհում ի սկզբանե՝ մարդկության գիտակցական պատմության սկզբից: Արդեն առաջին շումերական աղբյուրները մանրամասն խոսում են ինչպես հայերի, այնպես էլ հայերի առաջին պետության՝ իր բնույթով աստվածապետական պետություն հանդիսացած Հայկական լեռնաշխարհում ստեղծված Արատտայի քրմապետության մասին, իսկ աքքադական և էբլայական աղբյուրների «Արմանում»-ն ու «Արմի»-ն լրացնում են այդ տեղեկությունները[1]: Նույնաբովանդակ տեղեկատվություն են փոխանցում նաև հայկական աղբյուրները՝ ի դեմս Մովսես Խորենացու և վերջինիս համար սկզբնաղբյուր հանդիսացած պատմիչների[2], ինչպես նաև բաբելոնյան, հունական, ասորական, պարսկական (պահլավական) և այլ աղբյուրների[3]: Այսպիսով հինարևելյան աղբյուրները, ինչպես նաև անտիկ և միջնադարյան պատմական ավանդույթը հայերին ավանդաբար համարել է ապրած Հայկական լեռնաշխարհում մարդկության արարումից անմիջապես հետո, ժամանակակից լեզվով ասած՝ մարդկության գիտակցական պատմության սկզբից:

Հայոց հնագույն պատմության նկատմամբ վերաբերմունքը սկսեց փոխվել XIX դարի սկիզբից և այս գործընթացը իր գագաթնակետին հասավ նույն դարի վերջին ու հատկապես XX դարի երկրորդ կեսին: 1802 թ-ին հայտնաբերվեց հին պարսկական սեպագիրը վերծանելու գաղտնիքը, իսկ հետագա տասնամյակներում էլ մի շարք մասնագետներ կարողացան կարդալ նաև ասորեստանական և բաբելոնական արձանագրությունները: Հենց այս ժամանակներում էր, որ Հայաստանի տարածքում ավելի ու ավելի մեծ չափերով սկսեցին հայտնաբերվել արձանագրություններ, որոնք սկզբում կարծես թե նման էին ասորեստանական արձանագրություններին: Հետագայում, սակայն, պարզվեց, որ գիտնականները գործ ունեն արձանագրությունների նոր մի տեսակի հետ, որը հենց այդ ժամանակ էլ անվանվեց ոչ այնքան հաջող, սակայն իր ժամանակի գիտական մակարդակի համար ընդունելի թվացող «ուրարտական» տերմինով: «Ուրարտական» արձանագրությունները վերծանելիս մասնագետները սկսեցին օգտվել ասորեստանական արձանագրությունների վերծանման ժամանակ կիրառվող

---

[1] Տես՝ Մովսիսյան Ա. Ե., «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների)», Երևան 2005:

[2] «Հայոց պատմություն»-ում Մովսես Խորենացին հայտնում է առնվազն 3 անձանց մասին, որոնք իրենից առաջ գրել են Հայոց պատմությունը: Սրանց շարքում նախ և առաջ պետք է նշել ոչ անհայտ Մար Աբաս Կատինային, որի մասին պատմիչը մանրամասն տվյալներ է հաղորդում աշխատության սկզբում և չի զլանում անդրադառնալ վերջինիս նաև աշխատության այլ մասերում: Մյուսը պատմիչը Անի-Կեմախի քուրմ Օղյումպն է, որի հաղորդումները Խորենացին ևս խիստ բարձր է գնահատում (Գիրք 2, գլուխ 48): Եվ վերջապես պետք է նշել նաև Բարդածան Եղեսացու մասին, որն ապրել է II-III դարերում (Գիրք 2, գլուխ 66):

[3] Սրանց մասին Մովսես Խորենացին մանրամասն խոսում է իր աշխատության առաջին գլխում:

մեթոդիկայից և արդյունքում, ոչ այնքան ճշգրիտ ու բառացի, այնուհանդերձ շուտով կարողացան կարդալ դրանց զգալի մասը: Ընդ որում մասնագետներին այդպես էլ չզարմացրեց այն, որ արձանագրությունները վերծանվում են որոշակիորեն արհեստական, ոչ խոսակցային լեզվով:

Արդյունքում առաջ քաշվեց որոշակիորեն քաղաքական ենթատեքստ ունեցող և 1960-ականների կեսերին հայերի արթնացող անկախականության շարժմանը հարվածելուն կոչված «Ուրարտական միֆ»-ը, որը դրանից հետո դեռ երկար էր շարունակելու իր գոյությունը և, ըստ էության լինելով փակուղային, հետագա տասնամյակներում ավելի ու ավելի էր դեպի փակուղի տանելու իրենց ընտրած ուղղության անհեռանկարությունը այդպես էլ չընդունած գիտնականներին: Սկսեցին ակտիվորեն շրջանառվել արհեստական ու փաստացի բովանդակազուրկ «Ուրարտու» և «ուրարտացիներ» տերմինները, որոնց արդյունքում առաջ քաշվեցին նաև համապատասխան տեսություններ չգիտես որտեղից հայտնված և ուր կորած «ուրարտացի»[1] էթնոսի մասին: Այս գործընթացի գագաթնակետը հանդիսացան ոչ անհայտ Ի. Մ. Դյակոնովի աշխատությունները[2]:

Միայն իրեն հատուկ դոգմատիկ համառությամբ, կրքոտությամբ, անառարկելիության տոն ստացած մոլեռանդությամբ և իր ընդդիմախոսներին գիտական ու գործնական շրջանակներից դուրս մղելու նպատակ հետապնդող անձնական[3] ու գործնական[4] հստակ հարձակումների արդյունքում 1960-1980-

---

[1] «Էթնոս»-ի անվանումն իսկ խոսում է նրա արհեստականության մասին, քանի որ ակնհայտ է, որ այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե ժողովրդի անվան հետ, այլ մի տերմինի հետ, որը կարգավորում է անձի իրավական հարաբերությունները պետության հետ: Համեմատության համար տես «ռուս» և «ռուսաստանցի» տերմինների տարբերությունը:

[2] Ամենից առաջ՝ Дьяконов И. М "Предыстория армянского народа: (История Армянского нагорья с 1500 по 500 гг. до н. э.: Хурриты, лувийцы, протоармяне)", Ереван, 1968. Մանրամասն տես այստեղ - http://www.gerginakkum.ru/bibliography/diakonov/.

[3] Իր հոդվածներում Դյակոնովը զերծ չի մնում գիտության հետ որևէ կապ չունեցող անձնական բնույթ կրող որակումներից: Մասնավորապես, հանկարծ պարզվում է, որ Կիֆիշինը գրում է. «անհեթեթություններ», իսկ Գ. Բ. Ջահուկյանը, Վ. Վ. Իվանովը և այլոք, որոնք հանդես են գալիս «Միգրացիոն տեսության» դեմ, ընդամենը հանդիսանում են. «մերձգիտական շրջանակներ»-ի ներկայացուցիչներ (Дьяконов И. М., Древняя Эбла (раскопки в Сирии), М., 1985, с. 336): Ընդ որում սա գրում է մի մարդ, որն իր հուշերում բացահայտորեն խոստովանում է, որ իր «Մարաստանի պատմություն»-ը գրել է պատվերով (տես՝ Дьяконов И. М., Книга воспоминаний, СПб 1995, с 731 (http://uni-persona.srcc.msu.ru/site/authors/djakonov/posl_gl.htm)):

[4] Գիտական մակարդակում Ի. Մ. Դյակոնովին հակադրվելու համար իրենց գիտական ու մասնագիտական կարիերայով հատուցեցին մասնավորապես Սանկտ-Պետերբուրգի համալսարանի դոցենտ **Լև Ալեքսանդրի Լիպինը** (1908-1970), որը կորցրեց հրատարակվելու հնարավորությունը 1966 թ-ին և որին Դյակոնովը իր հուշերում ուղղակիորեն մեղադրում է ՆԳԺԿ-ի գործակալ լինելու մեջ (տես՝ Дьяконов И. М. "Книга воспоминаний", СПб; 1995, с 731 (http://uni-persona.srcc.msu.ru/site/authors/djakonov/posl_gl.htm)), ինչպես նաև **Վիտալի Ալեքսանդրի Քելյավսկին**, որը նույնիսկ բացահայտ չէր էլ վիճում Դյակոնովի հետ, բայց որը նույն այդ Դյակոնովի ջանքերով կորցրեց հրատարակվելու հնարավորությունը 1970 թ-ից և ավարտեց իր կարիերան ու կյանքը որպես գիշերային սովորական մի պահակ՝ այդպես էլ չպարզված հանգամանքներում: Դյակոնովի կողմից հալածված անձանց շարքում կարելի է մատնանշել նաև պատմական գիտությունների թեկնածու, Սանկտ-Պետերբուրգի համալսարանի ամբիոնի

ական թվականների ընթացքում Ի. Մ. Դյակոնովը խորացավ փակուղային հանդիսացող այս ուղղությունում ավելին, քան որևէ մեկը և խորացրեց փակուղային այս տեսությունը ավելին, քան որևէ մեկը արել էր և կաներ նրանից հետո: Արդյունքում արդեն XX դարի վերջին արտասահմանյան խորհրդային ու հետխորհրդային «ուրարտագիտություն»-ը հայտնվեց տեղապտույտի և գաղափարական հստակ ճգնաժամի մեջ: Ի. Մ. Դյակոնովը մահացավ 1999 թ-ին և նրանից հետո մեծապես հենց այս գիտնականի ջանքերով իր «փայլուն» վիճակը պահպանող տեսությունը սկսեց ռեգռես ապրել և փլուզվել: Պատահական չէ, որ Ի. Մ. Դյակոնովի մահվանից հետո արդեն ավելի քան տաս տարի անց էլ այս ոլորտում և անչափ շատ անպատասխան հարցեր պարունակող «դյակոնովյան» ուղղությունում այդպես էլ չի ասվել սկզբունքորեն որևէ նոր խոսք: Արտասահմանում «ուրարտագիտություն»-ը իջավ դյակոնովյան առաջին տարիների և մինչդյակոնովյան մակարդակին և շարունակում է մնալ այդ վիճակում առ այսօր[1]: Այսպիսով հայագիտությանը հասցվեց զգալի վնաս, քանի որ արդյունքում պարզվեց, որ մի քանի սերնդի գիտնականներ իրենց ջանքերն ու եռանդը ծախսել են ըստ էության փակուղային հանդիսացող մի տեսության վրա և, լավագույն դեպքում, գիտությանը չեն տվել որևէ օգուտ:

Սակայն հայագիտությանը հասցված վնասը դժբախտաբար միայն սրանով չսահմանափակվեց և հասցվեց ևս մեկ ու ծանր վնաս: «Ուրարտու»-ի և «ուրարտացիներ»-ի ի հայտ գալը անհրաժեշտություն առաջացրեց «տեղավորել» անառարկելիորեն գոյություն ունեցած այս պետությունը մատենագիր-գրավոր աղբյուրներից հայտնի հայոց այլ պետությունների հետ նույն ժամանակատարածային հարթությունում: Արդյունքում, համարվելով «հնարովի և վիպական», Հայոց հնագույն պատմության համակարգից տառացիորեն դուրս շպրտվեցին մատենագիր-գրավոր աղբյուրներից հայտնի

գիտական քարտուղար **Ռոստիսլավ Անտոնի Գրիբովին**, որին ի վերջո բարեբախտաբար հաջողվեց «պահել դիրքեր»-ը: Սեփական հուշերում Դյակոնովը որպես իր «անձնական թշնամիներ» է որակում եգիպտաբան և ասորաբան, ներկայումս Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր **Անդրեյ Լեոնիդի Վասսևիչին**, որի դոկտորականը 1960-ականներին ենթարկվեց Դյակոնովի կողմից ուղղորդվող ընդդիմախոսի անհիմն հարձակմանը, բայց որը կարողացավ ժխտել իր ընդդիմախոսների բոլոր հակաթեզերը և հաղթանակ տանել, ինչպես նաև **Անատոլի Գեորգիի Կիֆիշինը**, որը մի քանի տարի տևած հալածանքներից հետո 1970-ական թվականների սկզբից ի վերջո զրկվեց հրատարակվելու հնարավորությունից և ձեռք բերեց այդ իրավունքը միայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Հատկանշական է, որ Կիֆիշինի հոդվածը ԽՍՀՄ արևելագիտության ինստիտուտի «Բանբեր»-ում տպագրելու համար Դյակոնովի ուղարկած «զայրալից նամակ»-ի արդյունքում սեփական պաշտոնով հատուցեց հանդեսի գլխավոր խմբագիր **Սերգեյ Լվովի Ուսչենկոն**, իսկ Կիֆիշինին էլ հեռացրեցին ինստիտուտից: Մանրամասները տես այստեղ՝ Акимова Л. И., Гениальный Никто, Киев, 2001:

[1] Արևմտյան ու նախկին ԱՄՆ հայագիտությունը ուներ և ունի իր խնդիրները, որոնք, բարեբախտաբար, ուղղակի ազդեցություն չեն ունեցել և ունենում հայաստանյան հայագիտության վրա: Այնուհանդերձ հարկ է ավելացնել, որ, գործելով հայտնի քաղաքական պատվերի շրջանակներում, ԱՄՆ հայագիտությունը հստակ խնդիր է դրել ամեն կերպ խունացնել Հայոց հնագույն պատմությունը (տես՝ Այվազյան Ա. Ա., Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն, Երևան, 1998):

բոլոր հաղորդումները հայոց այլ պետությունների վերաբերյալ: Պատահական չէ, որ 1960-1980-ական թվականներին լայն թափ ստացավ վերոհիշյալ տեղեկությունների ուսումնասիրությունը հենց «վիպական» մակարդակում[1]: Ի. Մ. Դյակոնովի հեղինակության և վարչահրամայական ճնշման ազդեցության տակ զարգացավ ու ամրապնդվեց որոշակիորեն քաղաքական աստառ ունեցող «Միգրացիոն տեսություն»-ը, որն ուղղակի ոչնչացրեց մատենագիր-գրավոր աղբյուրներից հայտնի բոլոր և նույնիսկ ամենաարժեքավոր տեղեկությունները հայոց այլ պետությունների վերաբերյալ. վերջ, անառարկելիորեն ընդունվեց, որ բոլոր այն տեղեկությունները, որոնք պատկանում են «մինչուրարտական» ժամանակի Հայոց պատմությանը, «հնարովի են և վիպական»:

Հատկանշական է, որ խորհրդահայ և ԽՍՀՄ գիտական միտքը զգայուն կերպով հետևում էր «Միգրացիոն տեսության» վայրիվերումներին: Այսպես, «Միգրացիոն տեսության» կողմնակիցները սկզբում պնդում էին, որ Հայկական լեռնաշխարհում հայերը հայտնվել են միայն մ.թ.ա. VII դարի վերջում՝ պատմության ասպարեզից դուրս մղելով «ուրատացիներ»-ին և «Ուրարտու»-ն: Հետագայում, սակայն, հաշվի առնելով «Միգրացիոն տեսության» հիմքերը կասկածելիորեն խարխլող «Ա(Ու)րմեն» պետության և «ա(ու)րմե»-ների մասին մ.թ.ա. XII դարին վերաբերվող սեպագրերի հաղորդումները[2], «Միգրացիոն տեսության» կողմնակիցները բարեհաճեցին մասնակի «համաներում» հայտարարել մի քանի հարյուրամյակով՝ Հայկական լեռնաշխարհում հայերի «հայտնվել»-ը տեղափոխելով մ.թ.ա. XII դար և ըստ էության համակերպվելով, բայց այդպես էլ վերջնականապես չընդունելով մ.թ.ա. XII-VII դարերին վերաբերվող մատենագիր-գրավոր տեղեկությունների հավաստիությունը:

Առաջ անցնելով և որոշակիորեն թեմայից շեղվելով ասենք, որ առանց այդ էլ խարխուլ ու հիմնազուրկ «Միգրացիոն տեսության»-ը նոր հարված հասցրեցին խեթական աղբյուրներից հայտնի դարձած և աստիճանաբար գիտական մեծ շրջանառություն ստացած հաղորդումները «Հայա(սա)»-ի վերաբերյալ[3], էբլայական սեպագրերից հայտնի հաղորդումները «հայ» էթնոսի և «Արմի» պետության մասին[4], ինչպես նաև շումերա-աքքադական

---

[1] Տես օրինակ Աբեղյան Մ., Երկեր, հատոր 1, Երևան, 1966, Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, գիրք 1, Երևան, 1972 և այլն:

[2] Տես օրինակ՝ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան, 1968 էջ 239, 293 և այլն:

[3] Տես մասնավորապես՝ Ադոնց Ն., Հայոց պատմությունը, Երևան, 1972, Խաչատրյան Վ. Ն., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, Ավետիսյան Հ. Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IX դդ, Երևան, 2002, Քոսյան Ա. Վ., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004 և այլն:

[4] Տես մասնավորապես՝ Մովսիսյան Ա. Ե., Հայաստանը…, Երևան 2005, "Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Вахагну", ИФЖ, N 4, Ереван 1983, Ուլուբաբյան Բ. Ա., Զրուցարան, Երևան, 1991 և այլն:

աղբյուրների «Արատտա»-ն, «Հայ»-ը և «Արմանում»-ը[1]: Հարցին վերջնական պարզաբանում տալու համար ավելացնենք, որ ներկայումս Հայոց հնագույն պատմությունը Հայաստանում ազատվել է «Դյակոնովյան կապանքներ»-ից և «Միգրացիոն տեղապտույտ»-ից ու հաջողությամբ զարգանում է, այն դեպքում, երբ «Միգրացիոն տեսության» հետքերով գնացող Հայոց հնագույն պատմության մասնագետները արտասահմանում հայտնվել են խորը տեղապտույտի մեջ և, գիտակցելով հանդերձ սեփական ուղղության անհեռանկարությունը, սակայն գերի մնալով թղթին հանձնված հազարավոր էջերին ու ձեռք բերված գիտական կոչումներին, որպես կանոն ոչինչ ավելին չեն անում, քան ծայրահեղ և անտրամաբանականության աստիճանի հասնող կոնսերվատիզմի դիրքերից արդեն փլատակների կույտի վերածված «Միգրացիոն տեսության»-ը հերթական հարվածները հասցնող փաստերը կուրորեն ժխտելը, իսկ հայաստանյան մասնագետներին էլ «ազգայնամոլության» մեջ մեղադրելը[2]:

Հ.Գ. *Հարգելի բարեկամ*

Աշխատանքն ի սկզբանե նախատեսված էր 2012 թ-ի հունիսի 5-ից 6-ը Հայաստանի Հանրապետության Գիտությունների ակադեմիայում անցկացվելիք «Հայկազունիներ. առասպել և պատմություն» թեմայով գիտաժողովին ներկայացվելու համար, սակայն վերջին պահին, երբ այն արդեն հանձնված էր տպագրության, հայտնի դարձավ, որ *գիտաժողովին մասնակցել ինձ **չի թույլատրվել:*** Ամեն դեպքում, չնայած այդ հանգամանքին, գտնելով, որ արված աշխատանքը օգտակար կլինի գիտաժողովի մասնակիցների համար, որոշեցի գրքի տպագրությունը չդադարեցնել և հասանելի դարձնել այն գիտաժողովի մասնակիցներին:

Ցանկության դեպքում ինձ հետ կարող եք կապ հաստատել 093 45-80-04 հեռախոսահամարով, Lion1700@yandex.ru էլեկտրոնային փոստով, ինչպես նաև հեղինակին պատկանող http://www.milhistory.listbb.ru ֆորումային կայքի միջոցով:

---

[1] Տես մասնավորապես՝ Մովսիսյան Ա. Ե., Հայաստանը…, Ադոնց Ն., Հայոց պատմությունը, Երևան, 1972, Гамкрелидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, Тбилиси 1984 և այլն:

[2] Խնդրի մանրամասն քննարկումը տես այստեղ՝ Шнирельман В.А., Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье, Москва 2003.

Գլուխ 1
Մոռացված մի արքայատոհմ

Հայոց հնագույն պատմությանը համակած «Դյակոնովյան» կամ «Միգրացիոն» ճգնաժամը, որի մասին մանրամասն խոսվեց վերևում, ամենաանարդարացի ու անհիմն, բայց միաժամանակ դժբախտաբար նաև ամենածանր հարվածներից մեկը հասցրեց Հայկազունիների տոհմի պատմությանը (այսուհետ նաև՝ ՀՏՊ): ՀՏՊ-ն սկզբունքորեն դուրս մղվեց գիտական ակադեմիական շրջանակներից և իր գոյությունը շարունակեց միայն եկեղեցական պատմության համատեքստում, ինչը, հասկանալի կերպով, ոչ միայն չհաղորդեց վերջինիս լուրջ հակազդման ներուժ, այլև զուտ պատմական տեսանկյունից առավել վարքաբեկեց նրան՝ կարծես ավելի հաստատելով վերջինիս «վիպականություն»-ը: Պատահական չէ, որ գործնականում հնարավոր չէ մատնանշել խորհրդային ժամանակաշրջանին վերաբերվող ՀՏՊ-ին նվիրված որևէ լուրջ պատմական աշխատություն, իսկ ՀՏՊ-ի ուսումնասիրման ամենալուրջ գիտական աշխատանքները շարունակում են մնալ Միքայել Չամչյանի «Հայոց Պատմություն»-ը[1], թերություններից ամենևին էլ ոչ զուրկ Ն. (Մ.) Էմինի հետազոտությունը[2], ինչպես նաև, որոշակի իմաստով, Ղևոնդ Ալիշանի աշխատանքը[3]: Ընդ որում, եթե վերջին աշխատանքները գրվել են 120-130 տարի առաջ և, մեղմ ասած, այժմ արդեն վաղուց չեն փայլում իրենց արդիականությամբ, ապա Միքայել Չամչյանի ավելի շուտ սկզբնաղբյուրային բնույթ ունեցող երկի տարիքը արդեն մոտենում է երրորդ հարյուրամյակին:

Անկախության ձեռքբերումից ու «Դյակոնովյան կապանքներ»-ից և «Միգրացիոն տեղապտույտ»-ից հաջողությամբ ազատվելուց հետո ՀՏՊ-ի ուսումնասիրման ուղղությամբ սկսեցին կատարվել որոշակի քայլեր, թեև թույլ տանք մեզ ասելու, որ նույնիսկ հիմա էլ, երբ մեր անկախ պետությունը արդեն տոնել է իր քսանամյակը, խնդիրը հեռու է բավարար լուծում ստացած լինելուց: ԽՍՀՄ վերջին և անկախության տարիներին տարբեր մասնագետներ այս կամ այն կերպ փորձում էին անդրադառնալ թեմային՝ առաջարկելով այս կամ այն լուծումը: Ընդ որում, եթե մի շարք մասնագետներ ընկնում էին կույր ծայրահեղության մեջ, իդեալականացնելով ու որպես բացարձակ ճշմարտություն ընդունելով մատենագիր-գրավոր աղբյուրների հայտնած տեղեկությունները[4], ապա մի շարք գիտնականներ էլ կանգնած էին ավելի չափավոր դիրքերի վրա:

---

[1] Չամչյան Մ., Հայոց պատմություն, Երևան, 1985:
[2] Эмин Н. О., Династический список Хайкидов в истории Моисея Хоренского, Москва 1884.
[3] Տես՝ Ալիշան Ղ., Հին հավատք կամ հեթանոսական կրոն հայոց, Վենետիկ 1895:
[4] Տես օրինակ՝ Айвазян С. М., История России: Армянский след, М., 1997, ինչպես նաև նույն հեղինակի այլ աշխատությունները:

Այսպես, գիտնականների մի խումբ առաջարկում էր Հայկազունիների տոհմում տեսնել հաղորդումներ «ուրարտական» արքայատոհմի մասին[1], սակայն ավելին, քան բավականին հիմնավորված կերպով Հայկ Նահապետի աստվածային կերպարի նույնացումը այսպես կոչված «Հալդի»-ի հետ, ինչպես նաև Հայկազունիների Արամի ու «ուրարտական» Արամի (այսպես կոչված «Արամեի») մեծապես արհեստական բնույթ ունեցող նույնացումը, նրանք այդպես էլ չկարողացան անել[2]: Մեկ այլ խումբ գիտնականներ, հրաժարվելով նախորդ ուղղությունից, փորձեցին Հայկազունիների մեջ տեսնել Միտանիի արքաներին[3]: Վերջին տեսությունը շրջանառվում է նաև այսօր ու, թեև վերջինիս կողմնակիցներից են իմ կողմից արժանիորեն մարդկային և գիտական մեծ հարգանքի արժանացած գիտնականներից ոմանք, սակայն թույլ կտանք մեզ չընդունել նաև այս տեսությունը:

«Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք» աշխատության վրա աշխատելու 15 տարվա ընթացքում տողերիս հեղինակը առիթ ունեցավ ուսումնասիրելու ՀՏՊ-ն և դրա վերաբերյալ ձևավորելու ուրույն և, թող թույլ տրվի ասել, մեր կարծիքով զգալիորեն հիմնավորված մի համակարգ: Ընդ որում առաջարկվող համակարգի հիմքում դրվում է մինչ այս «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք» աշխատությունում լայն կիրառություն ստացած մեթոդը, որը կոչել ենք «Համադրման մեթոդ»[4]: ՀՏՊ-ն ուսումնասիրելիս ես առաջնորդվել եմ օտար և հայ սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունների սինթեզման ու համադրման մեթոդով, որի էությունը կայանում է հետևյալում. ***ի սկզբանե վեր կանգնել ցանկացած տեսակի կանխակալ կարծիքներից և, նախապատվությունը չտալով ոչ մեկին, անկողմնակալ հայացքով ուսումնասիրության ենթարկել բոլոր աղբյուրների հայտնած տվյալներն ու դրանց քննարկման և համաշխարհային պատմական իրադարձությունների հետ համադրման արդյունքում հասնել տրամաբանական ու հիմնավորված եզրահանգման:*** Օրինակ՝ ինչքան էլ արժեքավոր լինեն Մովսես Խորենացու հայտնած տվյալները, որոշ դեպքերում դրանցում առկա են բացահայտ ու հաճախ Պատմահոր կամքից անկախ տեղ գտած սխալներ և այս դեպքում ամենևին էլ պետք չէ պնդել այդ տեղեկությունները՝ բացահայտ հակասության մեջ մտնելով հիմնավորված և համընդհանուր ճանաչում ստացած սխեմաների հետ ու համաշխարհային հանրության աչքում արժեզրկել և ծիծաղելի դարձնել մեր պատմությունը: Դրա փոխարեն անհրաժեշտ է փորձել գտնել նման տեղեկատվության հայտնման պատճառը և վերջինիս իրական տեղը հայոց պատմության մեջ՝ իր հերթին չընկնելով հակառակ ծայրահեղության մեջ՝ այդ ամենը համընդհանուր ժխտելով ու հեքիաթային կամ վիպական հռչակելով:

---

[1] Տես օրինակ՝ Իշխանյան Ռ. Ա., Պատկերազարդ պատմություն հայոց» գիրք Ա, էջ 50, Երևան, 1990:

[2] Այս տեսակետի հիմնադիրներից մեկն էր ոչ անհայտ Լեման-Հաուպտը: Տեսակետի արտացոլման ամենաթարմ օրինակներից տես Անտոնյան Գ. Մ., Ադամից Հայկ ու մինչև Վահե, Երևան, 2010:

[3] Տես օրինակ Մովսիսյան Ա. Ե., Հայոց..., էջ 32:

[4] Տես՝ Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 1, Երևան, 2007, էջ 11-12:

Այս ամենի հետ կապված անհրաժեշտ է անդրադառնալ նաև Միքայել Չամչյանի բերած Հայկազունիների արքայացանկին: Չամչյանը այն կազմելիս հիմք է ընդունել հիմնականում Մովսես Խորենացու, իսկ մասամբ էլ այլ (հնարավոր է՝ մեզ անհայտ[1]) պատմիչների տվյալները: Հենց այս պատճառով, ի դեպ, նրա բերած ցանկում, ի տարբերություն Խորենացու ցանկի, առկա են վերջինիս կողմից չհիշատակվող հինգ լրացուցիչ արքաներ՝ Շավարշ II-ը (մ.թ.ա. 1180-1137), Պերճ II-ը (մ.թ.ա. 1075-1035), Ամբակ II-ը (մ.թ.ա. 910-883), Փառնվազ I-ը (մ.թ.ա. 838-805) և Փառնակ II-ը (մ.թ.ա. 805-765):

Խնդիրը որոշակիորեն քննարկված է գրականության մեջ, սակայն բաց մնացած հարցերը դեռևս ավելի, քան շատ են: Սակայն թերհավատության տեղիք է տվել հատկապես այն հանգամանքը, որ Չամչյանը նշել է նաև այս արքաների կառավարման թվերը: Ստորև փորձ կարվի կապել Մովսես Խորենացու և Միքայել Չամչյանի շարադրած արքայացանկերը, ինչպես նաև Միքայել Չամչյանի բերած արքաների գահակալության տարիները համընդհանուր պատմության իրադարձությունների հետ՝ այդ ճանապարհով հիմնավորելով ու հաստատելու դրանց իսկությունը:

Այս ամենի հետ կապված անհրաժեշտ է անդրադառնալ նաև մինչ այժմ մեծապես առեղծվածային բնույթ ունեցող և մեկնաբանության կարոտ Միքայել Չամչյանի բերած Հայկազունիների արքայացանկին ու հատկապես ժամանակացանկին: Արքայացանկն ու ժամանակացանկը առաջարկելիս վաստակաշատ մխիթարիստը հիմք է ընդունել հիմնականում Մովսես Խորենացու, իսկ մասամբ էլ այլ (հնարավոր է՝ մեզ անհայտ) պատմիչների տվյալները: Սակայն թերհավատության տեղիք է տվել հատկապես այն հանգամանքը, որ Չամչյանը նշել է նաև այս արքաների կառավարման թվերը: Ստորև, հիմք ընդունելով վերոշարադրյալը, փորձ կարվի կապել Մովսես Խորենացու և Միքայել Չամչյանի շարադրած արքայացանկերը, ինչպես նաև Միքայել Չամչյանի բերած արքաների գահակալության տարիները համընդհանուր պատմության իրադարձությունների հետ՝ այդ ճանապարհով հիմնավորելով ու հաստատելու դրանց իսկությունը:

Իրականացնելով տարածաշրջանի մ.թ.ա. III-I հազարամյակների ողջ պատմության համակարգային վերլուծություն մեր կողմից ուսումնասիրվող թեմայի տեսանկյունից և արդյունքում ցույց տալով, որ ինչպես ՀՏՊ-ն, այնպես էլ Հայկազունիների տոհմի առանձին արքաների գործունեության ռազմա-քաղաքական բովանդակությունը հսկայական ճշգրտությամբ համընկնում է սեպագիր կամ այլ աղբյուներից հայտնի տարածաշրջանի ռազմա-քաղաքական պատմությանը՝ ստորև ցույց կտրվի, որ հայոց աղբյուրների ու ամենից առաջ Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները ոչ միայն չեն հակասում օտարազգի կամ ոչ մատենագիր աղբյուներին, այլև խիստ ուշագրավ և արժեքավոր կերպով լրացնում են դրանց՝ մեծ ճշգրտությամբ գտնելով իրենց տեղը Մերձավոր Արևելքի մ.թ.ա. III-I հազարամյակների

[1] Նույն կարծիքը արտահայտվել է նաև այստեղ՝ Մովսիսյան Ա. Ե., Հայոց..., էջ 32:

պատմության համատեքստում: Ընդ որում հատկապես կարևոր է շեշտել, որ վերևում նկարագրված գործընթացի արդյունքում իրենց տեղն ու հիմնավորումն են գտնում ոչ միայն հայոց, այլև Մերձավոր Արևելքի մ.թ.ա. III-I հազարամյակների պատմության բազմաթիվ այլ դրվագներ:

Ստորև փորձ կարվի լուսաբանել ՀՏՊ-ն՝ հիմք ընդունելով մատնանշված փաստերը և իրականացնելով տարածաշրջանի իր ժամանակի ողջ պատմության համակարգային վերլուծություն:

Գլուխ 2
Հայկ Նահապետ (մ.թ.ա. 2492-2411[1])

…Երկարատև պատերազմները համայնքների միջև թուլացրեցին շումերական քաղաք-պետությունները: Արդյունքում, համաձայն «Նիպպուրյան արքայացանկ»-ի[2], գերագահությունն անցավ էլամական Ավանին: Մ.թ.ա. մոտ 2500 թ-ին մենք արդեն տեսնում ենք, որ շումերական արքայացանկ է «ներխուժել» Էլամի արքա Մեսլիմը, որը նստում էր Ավանում, սերում էր Դեր քաղաքից և «Նիպպուրյան արքայացանկ»-ում հանդես է գալիս որպես Քիշի լուգալ[3]: Իրականում, սակայն, բավականին հիմքեր կան ենթադրելու, որ վերջինիս իշխանության տակ են եղել ոչ միայն Էլամը և Քիշը: Այսպես, Լագաշում գտնվել է Մեսլիմի անձնական իրերից մեկը և հայտնաբերվել են մի շարք առարկաներ, որոնք մակագրվել են Մեսլիմի կողմից: Բացի սրանից, Մեսլիմը, որպես հաշտարար դատավոր, հանդես է եկել Լագաշի և Ումմայի միջև մղվող հողային վեճում այսպես կոչված «Գուեդենի տարածք»-ի վերաբերյալ, որի կապակցությամբ վիճաբանությունը (իսկ ավելի հավանական է պատերազմը) շարունակվում էր մի քանի տասնամյակ[4]:

Եվ այսպես, մենք ունենք մի տիրակալ, որի իշխանության տակ են գտնվում Էլամը, ինչպես նաև Լագաշը, Ումման, Ադաբը, Քիշը և սրանց հարակից տարածքները: Սա համապատասխանում է Հարավային և Կենտրոնական Միջագետքին: Ընդ որում, եթե Մեսլիմի գոյության հետքերը Հյուսիսային Միջագետքում դեռևս չեն գտնվել, ապա, հաշվի առնելով քաղաքական զարգացումների հավանական մոդելը, ամենևին էլ չի կարելի բացառել, որ Մեսլիմի առնվազն գոնե ձևական գերիշխանությունը չի ընդունել նաև Միջագետքի մնացած (հյուսիսային) մասը:

Այսինքն, իրականում մենք գործ ունենք Սարգոն Աքքադացուց (մ.թ.ա. 2316-2261) մոտ երկու հարյուրամյակ ավելի շուտ ապրած մի ուժեղ և լայնարձակ իշխանություն ունեցած, սակայն պատմության մեջ ոչ այնքան հայտնի արքայի հետ, որի գործունեությունն էլ հենց իրենից ներկայացրել է «դարաշրջանի մեխ»-ն ու իր արձագանքն է գտել պատումների «Բաբելոնյան աշտարակ» շարքում: Այս ամենի ֆոնին սխալված չենք լինի նաև, եթե պնդենք,

---

[1] Այստեղ և հետագայում Հայկազունի արքաների իշխանության տարիները տրվում են ըստ Միքայել Չամչյանի կողմից շարադրված գահակալման փաստացի տարիների:

[2] «*Ուրը հաղթվեց և գահը տեղափոխվեց Ավան (**Էլամի մայրաքաղաքը – Մ.Հ.**)*» (Մովսիսյան Ա. Ե., Հայաստանը…, Երևան 2005, էջ 107)

[3] Քննարկվող ժամանակաշրջանում՝ քաղաքի ավագանու կողմից ընտրվող կառավարիչ-զորավարի տիտղոսը:

[4] Дьяконов И. М. “История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации”, Москва 1983, с. 195, 198.

որ, ի դեմս մատենագիր-գրավոր աղբյուրներից հայտնի «Բել»-ի[1], մենք գործ ունենք հենց Մեսլիմի հետ:

Հատկանշական է, որ Մեսլիմի, արևելքի իրապես առաջին այդ բռնակալի, «շումերական ազատության» առաջին խեղդողի և կենտրոնացված պետություն ստեղծելու այդ եռանդուն ջատագովի գործունեությունը, ինչպես նաև հենց նրա պետությունն իսկ այն աստիճան են տպավորել ժամանակակիցներին, որ դրա արձագանքները զգացվում են նաև հազարամյակներ անց: Այսպես, Մովսես Խորենացին մեզ է փոխանցում տեղեկատվություն, որը, կիրառելով Համադրման մեթոդը և դիտարկելով այն իր ժամանակի ժամանակա-տարածային կոնկրետ հարթությունում, ստանում է լրիվ որոշակի ռազմա-քաղաքական իմաստ. «*Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ զանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու (**այս հաղորդման մեջ միջնորդավորված ձևով ասվում է այն մասին, որ հասկանալի պատճառներով շումերյան քաղաքների ջլատված վիճակում գտնվելու գործում շահագրգռված Արատտան ամեն կերպ խոչընդոտում էր վերջիններիս միավորմանը, թեկուզ և որևէ այլ, երրորդ երկրի հովանու ներքո – Մ. Հ.**): Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա, բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների միջև (**նկատի են ունեցվում այն խորը սոցիալ-տնտեսական ու քաղաքական ցնցումները, որոնց մեջ էր հայտնվել Մերձավոր Արևելքը մ.թ.ա. XXVI-րդ դարի վերջում – Մ. Հ.**): Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, խելագարված, սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու (**նկատի են ունեցվում երկարատև և հյուծիչ պատերազմները, որոնք բռնկվեցին շումերական քաղաք-պետությունների միջև մ.թ.ա. XXVI-րդ դարի վերջին – Մ.Հ.**), և Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել: Որին Հայկը չկամենանալով հնազանդվել (**ակնհայտորեն այստեղ ի դեմս Հայկի մենք գործ ունենք Արատտայի օժանդակ զորաբանակի հրամանատարի հետ, որը մ.թ.ա. XXVI-րդ դարի վերջին օգնում էր շումերներին Էլամի դեմ մղվող պատերազմում – Մ.Հ.**), Արամանյակ որդին ծնելուց հետո, չվեց դեպի Արարադի երկիրը (**նկատի է ունեցվում Արատտայի քրմապետությունը – Մ. Հ.**), որը գտնվում էր հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդոծիններով, նրան*

---

[1] «Բել» տերմինը նշանակում է ընդամենը կառավարիչ, քաղաքի տիրակալ: Այս ամենի ֆոնին խիստ հատկանշական է, որ Մեսլիմը եղել է Քիշի, ինչպես նաև մեծ հավանականությամբ, այլ միջագետքյան քաղաքների լուգալը: Իհարկե, տերմինն ունի ավելի ուշ-սեմիտական բովանդակություն, բայց ի դեմս այդ փաստի մենք գործ ունենք ընդամենը տերմինների աղավաղման և մատենագիր-գրավոր սկզբնաղբյուրներում դրանց աղավաղված արտացոլման հետ:

հարած եկվորներով և բոլոր տանուտեղով: Գնում բնակվում է մի լեռան ստորոտում դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից ***(այս հետաքրքիր հաղորդումը, ի դեպ, վկայում է այն մասին, որ հայերը ամենևին էլ չեն «առաջացել» Բաբելոնյան աշտարակաշինությունից հետո, իսկ Հայկն էլ ընդամենը Արատտայի ներկայացուցիչն էր Միջագետքում – Մ. Հ.).*** *Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածում շինում է բնակության տուն և տալիս է ժառանգություն Կադմոսին, Արամանյակի որդուն* ***(այստեղ ամեն ինչ չէ, որ պարզ է: Կարելի է կարծել, որ այս ժամանակ Արատտայում կամ անիշխանություն էր, կամ էլ Հայկը ապստամբություն էր բարձրացրել: Հաշվի առնելով հետագա դեպքերը կարելի է հավանական համարել, որ մենք այստեղ գործ ունենք առաջին տարբերակի՝ անիշխանության, հետ, որն ըստ երևույթին առաջացել էր հերթական Մեծ քրմի մահից հետո – Մ. Հ.):*** *Սա արդարացնում է ասված անգիր հին գրույցները:*

Իսկ ինքը, ասում է, իր մնացած մարդկանցով և տանուտեղով շարժվում է դեպի հյուսիսային արևմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն թե այստեղ բնակվողները հայեր են Թորգոմի տան սերնդից: Շինում է և մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն: Այստեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնանիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավաթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդվել են դյուցազունին: Այս էլ արդարացնում է ասված անգիր գրույցները ***(երկրորդ վկայությունն այն մասին, որ հայերը ամենևին էլ չեն «առաջացել» Բաբելոնյան աշտարակաշինությունից հետո, իսկ Հայկն էլ ընդամենը Արատտայի ներկայացուցիչն էր Միջագետքում – Մ. Հ.)»***[1]:

Այսպիսով պարզ է դառնում, որ միջագետքյան քաղաքների հենց այս երկարատև և ավերիչ պատերազմների արձագանքներն են, որ պահպանվել են Խորենացու մոտ («*…այս ժամանակ ամեն մի մարդ, խելագարված, սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու*») և դրան հաջորդած պատմության մեջ հայտնի միջագետքյան քաղաքների քիչ թե շատ կայուն առաջին միավորումն իրականացրած Էլամի և Միջագետքի արքա Մեսիլիմի գործունեությունն է, որ Պատմահոր կողմից ընկալվել է որպես. «*… և Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել*»[2]: Ընդ որում այս սխեմայում լիովին տեղավորվում են և Հայկ Նահապետի գործողությունները, որը չհամակերպվեց այս ամենի հետ, և նոր արքայի «աշխարհանվաճ» նկրտումները, որը ցանկացավ հնազանդեցնել նաև Հայկին ու նվաճել նրա երկիրը: Այս ամենի ֆոնի վրա կարելի է ենթադրել, որ Արատտայի քրմապետությունը, որը, ելնելով սեփական շահերից, ամեն կերպ ձգտում էր պահպանել միջագետքյան քաղաքների մասնատվածությունը, օգնել

---

[1] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 10:
[2] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 10:

է նրանց Էլամի դեմ պայքարում, իսկ Հայկն էլ եղել է հայկական օժանդակ զորաբանակի ղեկավարը: Ինչ վերաբերվում է Բաբելոն քաղաքին, որն արձանագրություններում առաջին անգամ հիշատակվում է այս դեպքերից միայն մոտ 200 տարի հետո, այն էլ որպես երկրորդական մի քաղաք, ապա դա ամենայն հավանականությամբ կարելի է բացատրել նրանով, որ այն հիշատակված է Աստվածաշնչում և, բացի այդ, հետագա հազարամյակներում այն Միջագետքի ամենահայտնի քաղաքն էր ու պատմիչների կարծիքով ցանկացած միջագետքյան տիրակալ բնականաբար հենց այն պետք է ունենար որպես իր մայրաքաղաք:Այս ամենի ֆոնին, ի դեպ, արդեն ամենևին էլ զարմանալի չէ, որ «Բել»-ը Հայոց Նահապետի բանակի ուղղությամբ է շարժվում հենց «հետևակ բանակ»-ի մեծ բազմությամբ - ռազմական պատմության բնագավառում գոնե տարրական գիտելիքներ ունեցող յուրաքանչյուր ոք կհաստատի, որ մ.թ.ա. XXVI–XXV հարյուրամյակների Մերձավոր Արևելքի առանց բացառության բոլոր բանակները չունեին հեծելազոր և որպես կանոն կազմված էին բացառապես միայն հետևակից[1]:

Մեսլիմ-բելի ու Հայկ Նահապետի գործունեության հետ կապված անհրաժեշտ է մի քանի խոսք ասել նաև մ.թ.ա. 2492 թ-ի օգոստոսի 11-ի Հայոց ձորի ճակատամարտի վերաբերյալ:

Այս ճակատամարտը ավանդորեն համարվել է վիպական և հեքիաթային, սակայն ուշադիր ուսումնասիրողը այստեղ ոչ մի «հեքիաթային» տարր չի գտնի, քանզի մարտական գործողությունները և դրան նախորդող ու հաջորդող իրադարձությունների նկարագրությունը նման ենթադրության որևէ հիմք չի թողնում: Ինչ վերաբերվում է այս ճակատամարտի թվականին, ապա տոմարագիտական հաշվարկներով վաղուց արդեն հիմնավորվել է նրա կոնկրետ տարին, ամիսը և օրը[2]: Իր հերթին, «հեքիաթային», այն էլ զգալի վերապահումներով, կարող են համարվել թերևս միայն հաղորդումները «երկնադեզ հսկաներ»-ի և «հավերժ քաջեր»-ի մասին: Սակայն ակնհայտ է, որ «երկնադեզ հսկաներ» և «հավերժ քաջեր» ասելով Մովսես Խորենացին կամ այն աղբյուրը, որից օգտվել է նա, առաջին դեպքում ուղղակի ուզեցել են ընդգծել հակառակորդի բանակի ընտիր կազմը, նրանում հատկապես հաղթանդամ ռազմիկների մեծ քանակությունը, իսկ երկրորդում ըստ երևույթին նկատի է ունեցվում հետագա Աքեմենյանների և Սասանյանների Մատյան գնդի նման մի զորամասի մասնակցությունը, որի կազմը, ինչպես հայտնի է, անփոփոխ էր և այն անվանվում էր նաև «անմահների գունդ»: Ըստ երևույթին

---

[1] Միջագետքյան քաղաք-պետությունների բանակներում քննարկվող ժամանակաշրջանում գոյություն ունեին նաև փոքրաթիվ և անդյուրաշարժ քառանիվ մարտակառքեր, սակայն հավանական է կարծել, որ հարվածի արագության ու անակնկալի հետ մեծ հույսեր կապող, ինչպես նաև լեռնային տեղանքում դժվար կիրառություն ունեցող «քառանիվներ»-ի կիրառումից մ.թ.ա. 2492 թ-ի օգոստոսի 11-ի Հայոց ձորի ճակատամարտում Մեսլիմ-Բելը զերծ է մնացել ի սկզբանե:

[2] Խնդիրը բավականին քննարկված է և նույնիսկ «Դյակոնովյան» «լավագույն» տարիներին այս հանգամանքը, ինչքան էլ տարօրինակ է «Միգրացիոն ամենաթողության» տեսակետից, չէր վիճարկվում:

Մեսլիմ-բելի «երկնադեզ հսկաներ»-ից և «հավերժ քաջեր»-ից կազմված այս զորագունդը հանդիսացել է Սարգոն Աքքադացու 5.400-անոց վարձկան-մշտական զորաբանակի նախատիպը, որն էլ հետագայում ավելի զարգացած տեսքով ի դեմս «անմահների» «Մատյան գնդի» հանդիպում ենք Աքեմենյանների և Սասանյանների բանակներում:

Գլուխ 3
Արամանյակ (մ.թ.ա. 2026-1980)

Համաձայն Միքայել Չամչյանի, որը գահակալական իր ցանկը կազմելիս հիմք է ընդունել հիմնականում Մովսես Խորենացու, իսկ մասամբ էլ այլ պատմիչների տվյալները, Հայկազունիների գահացանկը սկսվում է մ.թ.ա. 2107 թ-ին: Այլ կարծիքի է Ղևոնդ Ալիշանը[1], որը, հիմք ընդունելով Հայկյան օրացույցի հետ կապված տոմարագիտական հաշվարկները[2], Հայկ Նահապետի իշխանության սկիզբ է համարում մ.թ.ա. 2492 թ-ի օգոստոսի 11-ը:

Այս կապակցությամբ կարելի է ենթադրել, որ Արամանյակը (մ.թ.ա. 2026-1980) իրականում չի եղել Հայկ Նահապետի որդին, այլ այդպիսի կարգավիճակ է ստացել հետագա պատմիչների պատկերացումներում այն բանի հետևանքով, որ Հայկ Նահապետից հետո մոտ 300 տարով Արատտայի քրմերին վերադարձած քաղաքական իշխանությունը կրկին, և այս անգամ արդեն ավելի քան մեկ ու կես հազարամյակով, վերադարձրել է Հայկազունիների տոհմին: Հարկ է նշել, որ կարող է տարակարծությունների տեղիք տալ Հայկ Նահապետի (մ.թ.ա. 2492-2411) իշխելու տարիների և մ.թ.ա. 2107 թ-ի (երբ ըստ Չամչյանի սկսվում է Հայկի գահակալությունը) անհամապատասխանությունը: Սակայն դա էլ, մեր կարծիքով, ունի իր բավարար բացատրությունը: Մ.թ.ա. 2107 թ-ը այս անգամ զարմանալիորեն համընկնում է հայկական Առաջին գերիշխանության («Կուտիական գերիշխանություն») ավարտի թվականի (մ.թ.ա. 2109/2108)[3] հետ, երբ որևէ կերպ նշված այդ հայտնի իրադարձությունը և Միջագետքից Հայկական բանակի վերադարձը Չամչյանը ընկալել է որպես Հայկ Նահապետի վերադարձ Բաբելոնից, ինչից մոտ մեկ տարի անց էլ, այսինքն մ.թ.ա. 2107 թ-ին սկիզբ է առնում վերջինիս գահակալությունը:

Կարելի է ենթադրել, և դա հաստատում են նաև Միջագետքյան աղբյուրները, որ Հայկից հետո այս կամ այն պատճառով Արատտան

---

[1] Խնդիրը մանրամասն քննարկված է այստեղ՝ Ալիշան Ղ., Հին հավատք կամ հեթանոսական կրոն հայոց, Վենետիկ 1895:

[2] Հայկյան օրացույցում տարին կազմված էր 365 օրվանից, այն դեպքում, երբ իրական տիեզերական տարին դրան գումարում է նաև 6 ժամ: Արդյունքում ստացվում էր այնպես, որ յուրաքանչյուր 4 տարին մեկ Հայկյան օրացույցը «տիեզերական տարուց» առաջ էր ընկնում 1 օրով: Այն բանից հետո, երբ սա կրկնվում էր 365 անգամ, Հայկյան օրացույցը, կատարում է այսպես կոչված «Հայկյան շրջան»-ը՝ 1460 տարին մեկ «տիեզերական ժամանակից» առաջ ընկնելով արդեն մեկ ամբողջ տարի: 428 թ-ին, վերջացել է Հայկյան հերթական շրջանը, որից առաջ եղել է ևս մեկը: Այսպիսով, 428 թ-ի օգոստոսի 11-ին վերջացած Հայկյան շրջանը սկսված է եղել մ.թ.ա. 1032 թ-ի օգոստոսի 11-ին, իսկ դրա նախորդ՝ մ.թ.ա. 2492 թ-ի օգոստոսի 11-ին: Հատկանշական է, որ սա գործնականում (8 տարվա ճշտությամբ) համապատասխանում է միջնադարյան աստվածաբան-տոմարագետների կողմից հաշվարկված «Բաբելոնյան աղետ»-ի տարեթվին՝ մ.թ.ա. 2500 թ-ին:

[3] Տես՝ Дьяконов И. М., История..., с. 265, 266., Մովսիսյան Ա. Ե., Հայաստանը…, Երևան 2005, էջ 80-81:

շարունակել են կառավարել քրմերը, Հայկազունիները պահպանել են բանակի ռազմական ղեկավարությունը, իսկ Արամանյակը իրականում ոչ թե անմիջապես Հայկի, այլ մ.թ.ա. 2108 թ-ին Ուրուկի ճակատամարտում Հայկական բանակը ղեկավարած ու ենթադրաբար Հայկից սերած Տիրիգանի սերնդից էր, սակայն Արամանյակը Հայկի որդին է համարվել, քանի որ, հաջորդելով Ուրի III գահատոհմի արքա Շուլգիի (մ.թ.ա. 2093-2046) նամակում հիշատակված Սուբարտուի[1] տիրակալ Ապիլաշային (մ.թ.ա. 2108-2026)[2] ու լինելով Հայկի տոհմից և միավորելով արքայի ու գերագույն քրմի պաշտոնները՝ Արատտայում վերջնականապես հաստատել է Հայկազունիների իշխանությունը և այս ամենով «արժանի դարձել» պատմիչների մոտ կոչվելու «Հայկի որդի»[3]:

Եվ այսպես, Արամանյակը գործել է մ.թ.ա. 2026-1980 թվականներին: Կրկին կիրառության մեջ դնենք Համադրման մեթոդը և պարզենք, թե որն է հանդիսացել «Արամանյակի դարաշրջանի մեխ»-ը:

Ամորիացիներ (շումերերեն «մարտու», ամուրրու, թարգմանաբար՝ «Արևմուտքի մարդիկ») – Արաբական անապատից դուրս եկած և վայրագ կատաղությամբ Միջագետքն ու հարակից երկրները ավերող սեմիտական անկասելի այս հորդան էր, որը տոն էր տալիս և երկար ժամանակ էլ դեռ տոն էր տալու Մերձավոր Արևելքի ռազմա-քաղաքական կյանքին, սկսած արդեն մ.թ.ա. XXI-րդ դարի վերջերից:

---

[1] Մ.թ.ա. III-II հազարամյակներում Հայաստանի նկատմամբ կիրառվող տերմինների բազմազանությունը չպետք է շփոթություն առաջացնի, քանի որ դրանք կիրառվում էին տարբեր հարթություններում: Նմանատիպ օրինակներ պատմության մեջ բազմիցս են հանդիպում: Այսպես, ԽՍՀՄ-ը ***պաշտոնապես*** կոչվում էր «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն», ***պաշտոնապես-կրճատ***՝ «ԽՍՀՄ», ***երկրի ներսում, կենցաղային մակարդակում***՝ «Սովետ», ***միջազգային ոչ-պաշտոնական մակարդակում***՝ «Ռուսաստան», ***արևմտյան հոգևոր-քաղաքական մակարդակում***՝ «Չարիքի կայսրություն», ***միջազգային-քաղաքական մակարդակում***՝ «Կոմունիստական կայսրություն», ***արևելյան աշխարհագրա-քաղաքական մակարդակում***՝ «Սիբիրյան տերություն» և այլն: Սկզբունքորեն նույն կերպ է եղել նաև Հայաստանի ընկալումը մեր նշած ժամանակահատվածում ու տարածաշրջանում: Այսպես, Հայաստանը ***պաշտոնապես*** կոչվում էր «Արա(րա)տտա, իսկ հետագայում էլ «Հայք», ***պաշտոնապես-կրճատ***՝ «Սու» «Հա» կամ «Ար», ***երկրի ներսում, կենցաղային մակարդակում***՝ «Հայք», ***միջազգային ոչ-պաշտոնական մակարդակում***՝ «Արմի» «Արմանում» կամ «Արմենիա», ***միջագետքյան հոգևոր-քաղաքական մակարդակում***՝ «Սուբարտու», ***միջազգային-քաղաքական մակարդակում***՝ «Անմահության և արդար օրենքների երկիր», ***միջագետքյան աշխարհագրա-քաղաքական մակարդակում***՝ «Կուտիում» իսկ հետագայում էլ «Կարդու» և այլն:

[2] Մովսիսյան Ա. Ե., Հայաստանը…, Երևան 2005, էջ 165:

[3] Այստեղ առիթն օգտագործելով կուզենայի նշել, որ Մովսես Խորենացու աշխատությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ունի բարդ ներքին կառուցվածք և այն, նրանում նկարագրված իրադարձությունները, պատմական դեպքերն ու փաստերը հասկանալու և դրանց ժամանակագրությունը հստակեցնելու համար պետք է վերջիններս դիտարկել սթափ ու կանխակալ կարծիքներից զերծ հայացքով՝ համաշխարհային պատմական աղբյուրների հետ համադրելու, բոլոր աղբյուրների հայտնած տեղեկությունները համակարգված ու քննադատաբար դիտարկելու, դրանք հաճախ սինթեզելու և այդ ճանապարհով ճշմարտությունը վեր հանելու, ինչպես նաև տրամաբանական հնարքները կիրառելու մեթոդով:

Ուրի երրորդ գահատոհմի արքա Իբի-Սինայի (մ.թ.ա. 2028-2003) օրոք ամորիական հորդան կործանիչ հարված հասցրեց Ուրի երրորդ գահատոհմի թագավորությանը, իսկ մ.թ.ա. 2003 թ-ին ամորիացիները, դաշնակցած Էլամի բանակի ու Սուբարտուի հետ, գրավեցին Ուրը և հիմնովին ավերեցին այն: Դրանից հետո ամորիացիները հիմնեցին իրենց քաղաք-պետությունները (Բաբելոն, Մարի, Իսինա, Լարսա և այլն) և շարունակեցին իրենց նվաճողական-ավարառուական գործունեությունը՝ իսկական պատուհաս դառնալով Միջագետքի հարակից երկրների համար: Մ.թ.ա. XX-րդ դարում Իսինայի կառավարիչ Իշբի-Էրայի (մ.թ.ա. 2003-1985) օրոք ամորիացիները շարունակեցին նվաճողական-թալանչիական արշավանքները և բազմիցս ասպատակեցին Հայաստանի հարավային շրջանները[1]: Սրանք բավականին հայտնի փաստեր են:

Իսկ այժմ եկեք տեսնենք, թե ինչ է հայտնում Արամանյակի քաղաքական գործունեության մասին Մովսես Խորենացին. «… *Արամանյակը բոլոր բազմությունն առնելով չվում է դեպի հյուսիսային արևելք և գնում իջնում է մի խոր դաշտավայր, բարձրագագաթ լեռներով շրջապատված, որի միջով մի կարկաչահոս գետ էր անցնում արևմտյան կողմից, և դաշտը կարծես թեքված էր դեպի արևելք և երկարությամբ ձգվում էր արեգակի կողմը, իսկ լեռների ստորոտներում բխում էին բազմաթիվ ականակիտ աղբյուրներ, որոնք միանալով, գետեր կազմելով, հեզաբար հոսում էին նրանց սահմանների մոտ, լեռների ստորոտներով և դաշտի ափերով, որպես թե պատանիներ շրջեին երիտասարդուհիների մոտերը: Իսկ հարավային արեգակնաճեմ լեռը, սպիտակափառ գագաթով, ուղիղ բուսել էր երկրից՝ պինդ գոտևորված մարդու երեքօրյա ճանապարհի շրջապատով, ինչպես ասաց մերոնցից մեկը, և հետզհետե սրվում էր դեպի վեր, իսկապես մի ծերունի լեռ՝ երիտասարդացած լեռների մեջ: Արամանյակը այս խորը դաշտում բնակվելով՝ շենացնում է նրա մի մասը, դաշտի հյուսիսային կողմում և լեռան ստորոտը, նույն կողմում, լեռն իր անվան հարմարեցնելով կոչում է Արագած, իսկ կալվածը՝ ոտն Արագած*»[2]:

Եվ այսպես, Հայոց արքան իր հպատակների հսկայական մի մասի հետ թողնում է սեփական թագավորության հարավային մասերը և շարժվում է դեպի հյուսիս: Ժամանակակից լեզվով ասած՝ արքան տեղափոխում է իր պետության կենտրոնը թագավորության հարավային մասից դեպի ավելի հյուսիս[3]: Իսկ ինչո՞ւ Արամանյակը այդպես վարվեց: Հիշեցնելով ամորիացիների ավերիչ արշավանքների և այն մասին, որ սրանց հաջողվել էր

---

[1] Տես Էշնունայի արքա Նուր-ախումի (մ.թ.ա. մոտ XX դարի վերջ, XIX դարի սկիզբ) «Ժամանակագրական բանաձևերի ցուցակ»-ը՝
http://cdli.ucla.edu/tools/yearnames/HTML/T30K1.htm.

[2] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 12:

[3] Նման մի երևույթի մենք ականատես ենք լինում նաև 1021 թ-ին, կապված Վասպուրականի թագավորության արքա Սենեքերիմ-Հովհաննեսի (1003-1021) ու իր հպատակների՝ սելջուկների արշավանքից խուսափելու և դեպի արևմուտք շարժվելու հետ (մանրամասն տես՝ Վարդանյան Վ. Մ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969, էջ 196-216):

ջախջախել Ուրի III գահատոհմի հզոր պետությունը՝ հետևությունը թողնենք ընթերցողներին:

Գլուխ 4
Արամայիս (մ.թ.ա. 1980-1940)

Մովսես Խորենացին հայտնում է, որ Արամայիսը հիմնեց Արմավիրը[1]: Նա չի ճշտում, թե ինչ պատճառով Արամայիսը մայրաքաղաքը Հայկաշենից տեղափոխեց դեպի ավելի հյուսիս գտնվող իր նոր քաղաքը, սակայն համընդհանուր պատմության հետ համադրելիս ակնհայտ է դառնում, որ դրա պատճառը կրկին ամորիացիներն էին: Հարկ է հիշել, որ ամորիացիների արշավանքները տեղի էին ունենում Հայոց թագավորության հարավային նահանգների անմիջական հարևանությամբ ու լրջորեն սպառնում էին երկրի նախկին մայրաքաղաքին: Այսպիսով Արամայիսի գահակալության տարիների նրա հիմնական գործողությունը ևս լիովին համապատասխանում է այն ժամանակի ոգուն, երբ Չամչյանը նշում է նրա գահակալության տարիները:

[1] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 12:

Գլուխ 5
Ամասիա (մ.թ.ա. 1940-1908)

Ամասիայի գործունեությունը, որը բնակվեց Արմավիրում, կրկին շատ հատկանշական է: «*Ամասիան մեծ սարն անվանեց Մասիս: Այդ ժամանակ հայտնվեցին ամազոնուհիները, այսինքն կանացի զորքը, որոնք Թորգոմի սերնդից էին: Թորգոմը նկատելով անհնազանդություն իր բանակում, սպանեց բոլոր տղամարդկանց և իր բանակը կազմեց միայն կանանցից: Նրանք իրենց գահը տեղափոխեցին Ալիոն և ասպատակելով ամայացրեցին երկիրը: 11 թագավորներ հավաքվեցին միասին և ոչնչացրին նրանց*»,- Հայոց այս արքայի գործունեության մասին հայտնում է Մխիթար Այրիվանցին[1]: Հիմք ընդունելով Ամասիայի գահակալության տարիները և Համադրման մեթոդի կիրառմամբ դրանք դիտարկելով համընդհանուր պատմության ֆոնի վրա՝ ակնհայտ է դառնում, որ այս հաղորդման մեջ խոսքը կրկին վերաբերվում է ամորիացիներին, իսկ ավելի կոնկրետ, այստեղ արտահայտված են սեպագիր աղբյուրներից հայտնի հետևյալ իրադարձությունները:

Մ.թ.ա. 2003 թ-ին ամորիացիները կործանեցին Ուրի III գահատոհմի պետությունը և, հիմնավորվելով Միջագետքի քաղաքներում ու Իսինայի I գահատոհմի պետության գլխավորությամբ ստեղծելով ապակենտրոնացված և տարբեր քաղաքներից կազմված մի պետություն, շարունակեցին իրենց հարազատ գործը՝ ռազմարշավները: Մ.թ.ա. XX դարում ամորիացիները բազմիցս ներխուժեցին նաև Հայոց թագավորության տարածք: Սակայն Իսինայի I գահատոհմի քաղաք-պետությունը, որը մոտ 70 տարի գերիշխանություն ուներ ամորիացիների այլ քաղաք-պետությունների նկատմամբ և գլխավորում էր նրանց, Լիպիտ-Իշտար (մ.թ.ա. 1934-1924) արքայի օրոք մ.թ.ա. մոտ 1930 թ-ին պարտություն կրեց ավելի շատ տեղական տարրի վրա հիմնված ու սրընթաց վերելք ապրող Լարսայի քաղաք-պետության արքա Գունգունումից (մ.թ.ա. 1933-1906) և արդյունքում կորցրեց ժառանգաբար Իսինայի արքաների պատկանող «Ուրի արքա» տիտղոսն ու իշխանությունը ողջ Հարավային Միջագետքի վրա: Ավելին, Լարսայի հաջորդ արքա, նախորդի որդի Աբիսարիխան (մ.թ.ա. 1906-1895) վերջնականապես պարտության մատնեց Իսինայի I գահատոհմի հերթական արքա Ուր-Նինուրտային (մ.թ.ա. 1924-1895): Արդյունքում հետագա մի քանի տասնամյակներում Իսինան հիմնավորապես մղվեց երկրորդ պլան:

Ինչպես տեսնում ենք Մխիթար Այրիվանցու հաղորդումները լիովին հաստատվում են սեպագիր աղբյուրների հաղորդած տվյալներով, քանզի ակնհայտ է, որ Ամասիայի գլխավորած Հայոց թագավորությունը մասնակցել է վերը հիշատակված և ըստ երևույթին Լարսայի կողմից գլխավորվող 11 պետությունների (կամ քաղաք-պետությունների) դաշինքին, որն էլ ծանր

---

[1] Մխիթար Այրիվանցի «Ժամանակագրական պատմություն» (ռուսերեն), ՍՊԲ 1869:

հարված է հասցրել Իսինայի կողմից ուղղորդվող և շրջակա երկրների համար պատուհաս դարձած ամորիացիներին: Նշենք նաև, որ Աբիսարիխան ամենայն հավանականությամբ այդ դեպքերի ժամանակ կառավարում էր որպես իր հայր Գունգունումի գահակից և հենց դրանով է բացատրվում վերջինիս ու Ամասիայի ժամանակակիցությունը:

Մխիթար Այրիվանցու այս հաղորդումը, որն ավելի համառոտ հաստատում է նաև Վարդան Արևելցին[1], շատ ուշագրավ է և պետք չէ այն անուշադրության մատնել, զուտ նրանում հիշատակվող «ամազոնուհիներ»-ի պատճառով: Սեմիտական ծագում ունեցող ամորիացիները եղել են զարգացման *մայրիշխանության* փուլում և այն տեղեկությունը, որ ամորիացիներին ղեկավարում էին կամ նրանց մոտ առնվազն մեծ հեղինակություն ունեին *կանայք,* Մխիթար Այրիվանցին կամ այն աղբյուրը, որից նա օգտվել է, չեն կարողացել ընկալել այլ կերպ ու նրանց համարել են ամազոնուհիներ:

Այսպիսով Ամասիայի գահակալության տարիներին տեղի ունեցած իրադարձությունները ևս լիովին համապատասխանում են այն ժամանակի ոգուն, երբ Չամչյանը տեղադրել է նրա գահակալության տարիները:

[1] Վարդան Արևելցի «Համընդհանուր պատմություն» (ռուսերեն), Մոսկվա 1861:

Գլուխ 6
Գեղամ (մ.թ.ա. 1908-1858) և Հարմա (մ.թ.ա. 1858-1827)

Ամեն կերպ սեփական երկիրը և հատկապես Միջնաշխարհը շենացնող Ամասիայի որդի Գեղամի գործողությունները ևս ամբողջովին համապատասխանում են համաշխարհային պատմության իր ժամանակվա ոգուն, իսկ Չամչյանի կողմից բերված նրա գահակալության տարիները կրկին լիովին հիմնավորված են երևում ժամանակի իրադարձությունների ընդհանուր ֆոնի վրա, քանզի ակնհայտ էր, որ պետք էր շենացնել ավերված երկիրն ու նախ և առաջ վերաշինել թշնամու նոր ասպատակություններից առավել զերծ տարածքները՝ Հայոց թագավորության համեմատաբար հյուսիս ընկած շրջանները: Նույնը կարելի է ասել նաև Գեղամի որդի և հաջորդ Հարմայի մասին, որին հայրը, ի դեպ, պատվիրում է ապրել Արմավիրում՝ շենացնելով հենց այն տարածքը, որն առավել ապահով էր հարավից սպառնացող թշնամու հարձակումներից:

Գլուխ 7
Արամ I Մեծ (մ.թ.ա. 1827-1769)

Հայոց աշխարհակալ այս արքայի գործողությունները ևս լիովին համապատասխանում են համաշխարհային պատմությանը և այն ժամանակի ոգուն, երբ Չամչյանը տեղադրել է նրա գահակալության տարիները: Պատմահայրը հայտնում է, որ Հարմային հաջորդել է վերջինիս որդին՝ Արամ I Մեծը (մ.թ.ա. 1827-1769)[1], որից հետո հաջորդ երկու գլուխներում Խորենացին մանրամասն կերպով անդրադառնում է իր կողմից մեծապես սիրված այս արքայի գործունեությանը:

Այսպես, Մովսես Խորենացին հայտնում է, որ գահ բարձրանալուց անմիջապես հետո Հայոց այս արքան ընդհարվել է «մարեր»-ի արքա «Նյուքար-Մադես»-ի հետ, հաղթել է նրան, մահապատժի է ենթարկել և ազատել է Հայոց թագավորության հարավ-արևելյան նահանգները վերջինիս ավերիչ ասպատակություններից[2]: Այս ճակատամարտն ու դրա հարակից իրադարձությունները ավանդականորեն համարվել են վիպական: Ու թեև ես առայժմ չունեմ այն հաստատող կողմնակի աղբյուրներ, ինչպես օրինակ Արամ I Մեծի տված հաջորդ երկու ճակատամարտերի պարագայում, սակայն վերևում արդեն տրված Հայկազունիների գահացանկի և Չամչյանի մատնանշած նրանց գահակալության տարիների, ինչպես նաև հաջորդ երկու ճակատամարտերի հիմնավորումը ինձ բերում են հետևության, որ Մովսես Խորենացին այս անգամ ևս չափազանց մոտ է ճշմարտությանը, ուղղակի աղբյուների ուսումնասիրման ներկայիս վիճակը հնարավորություն չի տալիս վերջնականապես հաստատել Պատմահոր ճշմարտացիությունը: Կարելի է միայն ենթադրել, չունենալով որևէ ուղղակի ապացույց, սակայն հաշվի առնելով աշխարհագրական գործոնը և Հայաստանի հարավ-արևելյան տարածաշրջանում այդ ժամանակ այս կամ այն չափող գերիշխող պետության հանգամանքը, որ դա եղել է Էլամի և (կամ) լուլլուբեյցիների բանակը: Հատկանշական է, որ Խորենացու երկի առաջին գլուխների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետագայում առաջացած «Մարաստան» տերմինը Պատմահայրը կիրառում է իր առաջացման ժամանակից շուտ՝ նկատի ունենալով պատմական Ատրպատականի տարածքը:

Տեղեկատվությունը անչափ հետաքրքիր հետևություններով է լի, սակայն, հետագա իրադարձությունների պարագայում: Այսպես, շարունակելով պատումը, Պատմահայրը հայտնում է, որ հայրենանվեր Արամը բարդ դիվանագիտա-քաղաքական հարաբերությունների մեջ է մտնում Ասորեստանի

---

[1] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 12:
[2] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 13:

արքայի հետ, որը կոչվում է «Նինոս»[1]: Հարավային հարևանի հետ բարդացած հարաբերությունները ի վերջո հանգեցնում են պատերազմի, որում Արամը հաղթանակ է տանում, ոչնչացնում է Հայոց թագավորության վրա հարձակված «Բարշամ»-ին և դրանից հետո Ասորեստանի տարածքը երկար տարիներ գցում է Հայոց թագավորության գերիշխանության տակ[2]: Կրկին կիրառության մեջ դնենք Համադրման մեթոդը և պարզենք, թե իրականում ո՞ր իրադարձություններն են իրենց արտացոլումը գտել Պատմահոր մոտ:

Նախ ակնհայտ է, որ տվյալ ժամանակահատվածում գործող Ասորեստանի արքան իրականում ամենևին էլ «Նինոս» անունը չէր կրում, քանզի մի կողմից, ըստ սեպագիր աղբյուրների, նման անունով արքա այդ ժամանակաշրջանում Ասորեստանում չի եղել, իսկ մյուս կողմից էլ պարզորեն երևում է այս անվան ծագումը Նինվե քաղաքի անունից: Այսինքն «Նինոս»-ը ոչ թե հատուկ անուն է, այլ դա, պատկերավոր ասած, Ասորեստանի մայրաքաղաք Նինվեում իշխող Ասորեստանի հերթական արքան է և դա նրա պատվանունն է[3]: Իսկ իրականում տվյալ ժամանակահատվածում Ասորեստանում իշխում էր Էրիշում II-ը (մ.թ.ա. 1818-1813)[4], որը, հաշվի առնելով այս անվան սկզբի «է»-ի «ա» ձևափոխվելու հակումը (օրինակ՝ էմիր-ամիր) և հետագայի ասորեստանյան արձանագրություններում գրեթե ամենուր հանդիպող «ա»-ի արտասանումը որպես «ու» (օրինակ՝ Արարատ - Ուրարատ, Արմե - Ուրմեն այլն), ակնհայտորեն Խորենացու հիշատակած «Բարշամ»-ն (Արշամ) է: Ընդ որում կարելի է ենթադրել, որ անվան սկզբի «Բ»-ն ավելացել է որպես մնացորդ «Բել» տիտղոսից: Կարելի է կարծել, որ անունը ի սկզբանե ունեցել է «Բել-Էրիշում» ձևը, սակայն արձանագրություններում արտացոլվել է միայն «Էրիշում»-ը: Հատկանշական է, որ Մարական թագավորության արքա Կիաքսարը (Ուվախշատրա) (մ.թ.ա. 625-585), որը հունական պատմական ավանդույթում անվանվում է «Արբակես», Մովսես Խորենացու մոտ անվանված է առայժմ անհայտ պատճառներով ավելացված, «ավելորդ» «Բ/Վ» տառով, որպես. «Վարբակես», ինչը, հաշվի առնելով այն հանգամանքը որ հուներենում «Բ»-ն արտասանվում է որպես «Վ» և, ընդհանրապես, այս տառերի՝ միամյանց փոխարինելու փոխվելու հակումը, լիովին կարող է ունենալ նաև «Բարբակես» ձևը: Այսինքն ամենևին էլ չի կարելի բացառել, որ. «Բարշամ» անունը ի սկզբանե ունեցել է. «Արշամ», այսինքն. «Էրիշում» տեսքն ու այդ ձևով իր ամրագրումն է ստացել արձանգրություններում՝ մատենագիր կամ բանավոր խոսքում մնալով որպես. «Վ(Բ)արշամ»: Էրիշում-Արշամ-Բ(Վ)արշամի մահից հետո իշխանությունը բռնազավթում է ծագումով ամորիացիներից սերող Շամշի-Ադադ I-ը (մ.թ.ա. 1813-1781):

---

[1] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 13:
[2] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 14:
[3] Իրավիճակը նման է պարթևական արքաների պարագային և նրանց կրած «Արշակ» տիտղոս-պատվանվանը:
[4] Գահակալման տևողությունը 6 տարի՝ իսկ գահակալման կոնկրետ տարիները ըստ - http://web.archive.org/web/20080511203747/http://www.genealogia.ru/projects/lib/catalog/rulers/0.htm

Այսպիսով կարելի է թույլ տալ մեզ գալ հետևության, որ Հայաստանի հարավում Ասորեստանի հիմնական բանակի ջախջախվելու և Էրիշում II-ի (ըստ Խորենացու՝ Բարշամի) սպանվելուց հետո անխուսափելի էր Ասորեստանի նոր արքա Շամշի-Ադադ I-ի՝ Արամ I Մեծին ենթարկվելը և Ասորեստանի հարկատու դառնալն ու այստեղ Խորենացին չի նահանջել ճշմարտությունից:

Անչափ հետաքրքիր են նաև տեղեկությունները Արամի ու «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ի միջև մղված պատերազմի պարագայում: Պատմահայրը հայտնում է, որ նախորդ հակառակորդներին հաղթելուց հետո Արամ I Մեծը իր հիմնական ռազմական ուժերը տեղափոխում է թագավորության արևմուտք և երկարատև պայքարից հետո հաղթում ու քաղաքական ասպարեզից դուրս է մղում տարածաշրջանի իր հակառակորդներից ամենաուժեղին և վտանգավորին՝ «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ին[1]: Ո՞վ է այս խորհրդավոր անձնավորությունը՝ Մովսես Խորենացու հիշատակած և Արամ I Մեծի (մ.թ.ա. 1827-1769) ժամանակակից «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ն:

Պահպանված «Անիտայի գրվածքներ» խեթական արձանագրության մեջ պատմվում է, թե ինչպես Խեթական թագավորության առաջին արքաներից մեկը՝ Անիտան (մ.թ.ա. մոտ 1810-1790), իր գահակալության սկզբում հաջող արշավանքներով նվաճում է Փոքր Ասիան՝ Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած տարածքները[2]: Այս հանգամանքը լիովին համապատասխանում է Պատմահոր այն հաղորդմանը, թե «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ն. *«... բռնացել գրավել էր տարածությունը երկու մեծ ծովերի միջև՝ այսինքն Պոնտոսի (**Սև ծով – Մ.Հ.**) և Օվկիանոսի (**Միջերկրական ծով – Մ.Հ.**)»*[3]: Հետաքրքիր է, որ վերոհիշյալ արձանագրությունը լռության է մատնում Խեթական թագավորության արքայի գահակալության հետագա տարիների իրադարձությունները, որոնք հայտնի են կողմնակի աղբյուրներից: Իսկ դրանցից մասնավորապես պարզ է դառնում, որ Անիտայի թագավորության վերջից Խեթական թագավորությունը մոտ 160 տարով անկում է ապրում: Ինչպես տեսնում ենք, սա ևս լիովին համապատասխանում է Մովսես Խորենացու հիշատակած «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ի գործունեությանը, նրա պետությանը, դրա տարածքին և հատկապես վերջին: Այսպիսով այս ճակատամարտերը մեկ անգամ ևս հաստատում են Չամչյանի բերած թվերի մեծ ստույգությունը:

Արդյունքում Պատմահոր հայտնած տեղեկությունները համադրման մեթոդի օգնությամբ ուսումնասիրելիս հանկարծ պարզ է դառնում, որ, ի դեմս «Խորենացու» կամ Հայկազունիների Արամի, մենք գործ ունենք աշխարհակալ

---

[1] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 14:
[2] Տես՝ Вестник древней истории, 1965 г., № 4, стр. 87-111 (http://annals.xlegio.ru/hetts/small/anitta.htm):
[3] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 14:

իսկական մի արքայի հետ, Հայոց պատմության ընթացքում աշխարհակալություն հիմնած մի տիրակալի հետ, որի գործունեության լիակատար պատկերը բացահայտվում է սեպագիր և գրավոր-մատենագիր աղբյուրների հայտնած տեղեկատվության համալիր վերլուծությունից[1]:

[1] «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 1»-ում մեր կողմից փորձ է արվել վերականգնել Արամ I Մեծի գահակալության ժամանակագրությունը: (էջ 26-27) Մասնավորապես, հաշվի առնելով Պատմահոր հաղորդումներն այն մասին, որ Արամ I Մեծը «Նյուքար-Մադես»-ի դեմ գործել է. «*…Նինոսի՝ ասորեստանցիներին և Նինվեին տիրելուց քիչ տարիներ առաջ*» (Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 13) և իր գահ բարձրանալուց ոչ շատ հետո, այսինքն մ.թ.ա. 1818 թ-ից առաջ և մ.թ.ա. 1827 թ-ից ոչ շուտ, կարծում ենք, որ «Նյուքար-Մադես»-ի պարտությունը և մահապատիժը տեղի են ունեցել մ.թ.ա. մոտ 1826 թ-ին: Իր հերթին, Էրիշում II-ի գահակալության վերջը մեզ օգնում է Ասորեստանի բանակի պարտությունը թվագրել մ.թ.ա. 1813 թ-ով: Դժվարություն է հարուցում թերևս միայն Անիտայի պարագան, սակայն, հաշվի առնելով, որ Խեթական թագավորության հետ ընդհարումը տեղի է ունեցել նախորդ իրադարձություններից բավականին անց, այն կարելի է մոտավորապես տեղադրել մ.թ.ա. 1790 թ-ին:

Գլուխ 8
Արա I Գեղեցիկ (մ.թ.ա. 1769-1743)

Հայոց հնագույն պատմությունը աղբանոց նետած մասնագետների թեթև ձեռքով «վիպական» հռչակված հերթական արքա Արա I Գեղեցիկի գործողությունները ևս լիովին համապատասխանում են համաշխարհային պատմությանը և այն ժամանակի ոգուն, երբ Չամչյանը տեղադրել է նրա գահակալության տարիները: Իրոք, երբ Համադրման մեթոդը կիրառելով շարունակում ենք դիտարկել ՀՏՊ-ն ընդհանրապես և Արա I Գեղեցիկի գահակալության ռազմա-քաղաքական պատմությունը մասնավորապես, պարզ է դառնում, որ այստեղ ևս ամեն ինչ ավելի քան իրական է:

Արամ I Մեծի մահվանից հետո նրա տերությունը դադարեց գոյություն ունենալ: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Համուրապպին (մ.թ.ա. 1792-1750), որը արդյունավետ բարենորոգումներով մինչ այդ սկիզբ էր դրել Բաբելոնի աննախադեպ վերելքին և սկսել էր վիճարկել Հայոց թագավորության գերիշխանությունը Մերձավոր Արևելքում, իր գահակալության 30-րդ տարում (մ.թ.ա. 1762 թվական). «*… հզոր աստվածների ուժով ճզմեց Էլամի բանակին, որը եկել էր Մարաշխայից, ինչպես նաև Սուբարտուին, կուտիներին, Էշնունային և Մալգումին, որոնք բարձրացել էին մեծ ուժով, ջարդեց մեկ արշավանքի ընթացքում*»: Հայոց թագավորությունը ծանր պարտություն կրեց: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ արդեն գրեթե տաս տարի էր, որ չկար Մեծն Արամը, իսկ նրա որդի Արան դեռևս երեխա էր: Արդյունքում Հայոց աշխարհակալությունը դադարեց գոյություն ունենալ, իսկ հաջողությունը զարգացրած Համուրապպին. «*…ամրապնդեց Շումերի և Աքքադի հիմքերը*»[1]:

Մ.թ.ա. 1761 թ-ին Բաբելոնի գերիշխանության տակ գտնվող Մարիի արքա Զիմիր-Լիմը (մ.թ.ա. 1780-1758), իր բանակում ունենալով բաբելոնյան 3.000-անոց մի օժանդակ զորաբանակ, ասպատակեց Հայաստանի հարավային շրջանները, թեև ի վերջո ստիպված եղավ նահանջել[2]: Մ.թ.ա. 1760 թ-ին արդեն բուն Բաբելոնի բանակին հաջողվեց գրավել հայերին դաշնակից Մանկիսում քաղաքը: Արդյունքում հայերը ստիպված եղան նահանջել դեպի լեռները, իսկ Էլամն ու Մալգումն էլ իրենց հերթին փակվեցին սեփական սահմաններում: Հակաբաբելոնյան դաշնակից ուժերը փորձեցին վերսկսել հարձակումը մ.թ.ա. 1757 թ-ին, սակայն Տուրուկայի ճակատամարտում (Հյուսիսային Միջագետք) կրկին պարտություն կրեցին: Արդյունքում Բաբելոնի գերիշխանությունը Մերձավոր Արևելքում ավելի ամրապնդվեց: Սակայն Համուրապպին գոհ չմնաց նաև սրանից և նպատակ դրեց վերջնականապես ծնկի բերել հայերին: Ընդ որում, որպեսզի չհամարվի հենց նոր կնքած

---

[1] Տես՝ Дьяконов И. М., История..., с 362: Արձանագրության բուն տեքստը տես այստեղ՝ http://ru.wikipedia.org/wiki/Хаммурапи.

[2] Արձանագրության բուն տեքստը տես այստեղ՝ http://ru.wikipedia.org/wiki/Хаммурапи.

խաղաղությունը խախտած անձ, այս անգամ Բաբելոնի արքան մարտական գործողություններ սկսեց իր վասալի՝ Ասորեստանի միջոցով:

Արդեն Արամ I Մեծի թագավորության վերջին տարիներին Ասորեստանի արքա Շամշի-Ադադ I-ը (մ.թ.ա. 1813-1781) իրեն բավականին ազատ էր զգում: Ու թեև իր նախորդի սարսափելի ջախջախումը այդպես էլ չմոռացած Ասորեստանի այս արքան իրեն չափազանց զգույշ էր պահում, այնուհանդերձ դա չէր խանգարում վերջինիս բուռն գործունեություն ծավալել:

Մի քանի հաջող արշավանքներով Շամշի-Ադադ I-ին հաջողվեց զավթել մի շարք քաղաքներ Տիգրիսի միջին հովտում, իսկ հետո գրավել նաև Ասսուրը: Բայց սրանով փառասեր այս տիրակալը չբավարարվեց: Վերջինիս հաջողվեց իր պետությանը միացնել նաև Մարիի քաղաք-պետությունը, իր տիրապետությունը հաստատել Բալիհ[1] և Խաբուր գետերի հովիտներում, ինչպես նաև գրավել Կատնա երկրամասը հարավային Ասորիքում: Սեփական արձանագրություններում Ասորեստանի այս արքան հպարտանում է, որ իրեն հաջողվել է հարկատու դարձնել Ասորեստանից հյուսիս-արևելք գտնվող Տուրկիշի արքաներին, ինչպես նաև հուշակոթող թողնել Լավանա երկրում՝ «*Մեծ ծովի ափին*»[2]: Ընդ որում հատկանշական է, որ իր թագավորության վերջին տարիներին կախումը Հայոց թագավորությունից Ասորեստանի համար գործնականում դարձել էր արդեն ձևական: Այս մասին է վկայում այն հանգամանքը, որ Շամշի-Ադադ I-ը իրեն հռչակեց ոչ թե «իշշիակկում» (կառավարիչ), այլ «շարկիշշատի», որը թարգմանաբար նշանակում է. «*Բազմաթիվների արքա*»: Եվ վերջապես հենց Շամշի-Ադադ I-ն էր, որ սերտ հարաբերություններ հաստատեց վերելքի ուղին բռնած Բաբելոնի հետ, որի սեմիտական բնույթը վերջինիս բնականաբար ավելի հարազատ էր, քան արիական Հայաստանը[3]:

Շամշի-Ադադ I-ի մահից հետո իրադրությունը Միջագետքում ավելի արմատական փոփոխությունների ենթարկվեց: Հաջողակ այս արքայի որդին և հաջորդ Իշմե-Դագան I-ը (մ.թ.ա. 1781-1756) իրեն դրսևորեց որպես թույլ մի տիրակալ և հաստատուն կերպով սկսեց զիջել ավելի ու ավելի ուժեղացող Բաբելոնին: Ընդ որում այս արքան ստիպված էր ոչ միայն ծանր ու անհեռանկար պատերազմ մղել Ներքին Զաբ և Դիալա գետի հովիտներում բնակվող լեռնականների դեմ, այլև՝ մշտապես դիմագրավել պալատական խարդավանքներին: Իրավիճակը բարդացնում էր հատկապես իշխանատենչ և ամենազոր կնոջ՝ Շամիրամի (Շամմուրամաթի), առկայությունը: Այս ամենը ի վերջո հանգեցրեց նրան, որ Իշմե-Դագան I-ը ստիպված եղավ ընդունել Բաբելոնի ուղղակի գերիշխանությունը և մարտական գործողությունների մեջ ներքաշվել հենց նոր ծանր պարտություն կրած Հայոց թագավորության դեմ:

---

[1] Կարելի է կարծել, որ մի շարք հեղինակների մոտ այս գետի անունը շփոթվել է հետագա «Բահլ» քաղաքի անվան հետ, որի արդյունքում էլ կարծիք է ստեղծվել, թե Շամիրամը մարտնչել է Բահլում կամ նրա մոտակայքում, ինչը իրոք որ անհավանական է:

[2] Նկատի է ունեցվում ներկայիս Լիբանանի տարածքը:

[3] Дьяконов И. М., История..., с. 362:

Հետագա իրադարձությունների մասին մեզ տեղեկություններ է փոխանցում Դիոդորոս Սիկիլիացին. «*Այնուհետև նա (**ըստ հեղինակի՝ Նինոսը – Մ.Հ.**) մեծ զորքով ներխուժեց Արմենիա և մի շարք քաղաքներ ավերելուց հետո կոտորեց տեղի բնակչությանը: Ուստի և նրանց թագավոր Բարզանեսը, տեսնելով, որ ինքը ի վիճակի չէ նրա դեմ կռվելու, առատ նվերներով դիմեց նրան և ասաց, որ ինքը կկատարի նրա բոլոր հրամանները*»: Դրանից հետո «Նինոս»-ը Բարզանեսին «*… վերաբերվեց մեծահոգաբար և համաձայնվեց, որ նա տիրի Արմենիային… զորք ուղարկի և միջոցներ իր բանակի համար*»[1]: Այսպիսով մ.թ.ա. 1756 թ-ին ինչ-որ տեղ Մեծ Զաբ գետի հովտում տեղի ունեցավ ճակատամարտ, որում փոքրահասակ արքայի խնամակալի գլխավորած Հայկական բանակը անհաջողության մատնվեց[2]: Հայոց թագավորությունը ստիպված եղավ առժամանակ ընդունել Ասորեստանի, իսկ միջնորդավորված ձևով նաև Բաբելոնի գերիշխանությունը:

Սակայն Ասորեստանի վիճակն էլ փայլուն չէր: Ճիշտ է, Համուրապպիի մահվանից հետո Բաբելոնը սկսեց զիջել դիրքերը, սակայն Ասորեստանը ևս բռնել էր անկման ուղին: Մութ-Ասկուրը (մ.թ.ա. 1756-1740), որը հաջորդել էր հորը, ըստ էության կառավարում էր ձևականորեն և ողջ փաստական իշխանությունը գտնվում էր նրա իշխանատենչ մոր՝ Շամիրամի, ձեռքին: Հենց վերջինիս նախաձեռնությամբ էր, որ մ.թ.ա. 1743 թ-ին Ասորեստանի բանակը կրկին ներխուժեց Հայաստան: Հերթական այս հարձակման համենայն դեպս գոնե ձևական պատճառը լայնորեն հայտնի է՝ Ասորեստանի թագուհու տենչանքը Հայոց արքայի նկատմամբ: Արա լեռան ստորոտում տեղի ունեցած արյունոտ ճակատամարտում հայերին հաջողվեց կասեցնել թշնամու առաջխաղացումը, թեև Հայոց արքան ընկավ մարտում[3]: Հայկական բանակը, որը նահանջել էր, սկսեց արագորեն համալրումներ ստանալ, ինչն էլ ստիպեց թշնամուն ի վերջո հեռանալ Հայաստանից:

Իսկ այժմ մի փոքր ժամակագրություն: Համաձայն «մասսորետյան տրադիցիա»-ով կազմված ու այժմ էլ Իսրայելում գործածության մեջ գտնվող Հրեական պաշտոնական օրացույցի հիման վրա վերականգնված «Աստվածաշնչյան ժամանակագրության»՝ Աբրահամը ծնվել է «աշխարհի արարում»-ից (մ.թ.ա. 3760 թ.) հետո 1948 թ-ին, ինչը համապատասխանում է Գրիգորյան օրացույցի մ.թ.ա. 1812 թ-ին: Համաձայն Եվսեբիոս Կեսարացու կողմից վերականգնված ժամանակագրության՝ Շամիրամը Աբրահամի ժամանակակիցն էր, այսինքն ծնվել էր մ.թ.ա. XIX դարի վերջում կամ XVIII դարի սկզբում: Իր հերթին, համաձայն Դիոդորոս Սիկիլացու[4], Շամիրամի ամուսինը՝ հերթական «Նինոս»-ը, պայքարել է իր թագավորության արևելքում

---

[1] Դիոդորոս Սիկիլացի, Գիրք 2, մաս 1:

[2] Ըստ «Նինոսի վիպերգ»-ի՝ Кузнецова Т.И., Роман о Нине и другие папирусные отрывки греческого романа, М., 1969. с. 107-131. http://www.philology.ru/literature3/kuznetsova-69.htm

[3] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 15:

[4] Դիոդորոս Սիկիլացի, Գիրք 2:

գտնվող լեռնականների դեմ, ինչը հաստատվում է սեպագրերից հայտնի այն տեղեկությունով, որ Իշմե-Դագան I-ը ծանր պատերազմներ է մղել Ներքին Զաբ և Դիալա գետերի հովիտներում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ լիովին տրամաբանական է կարծել, որ որպես Շամիրամի ամուսին հանդես եկող հերթական «Նինոս»-ը իրականում հենց Իշմե-Դագան I-ն է:

Մովսես Խորենացին հայտնում է, որ. «*Արան* ***(Արա I Գեղեցիկը (մ.թ.ա. 1769-1743 – Մ. Հ.)*** *Նինոսի վախճանվելուց քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին*»: Վերևում արդեն ցույց տրվեց, որ այստեղ հանդիպող «Նինոս»-ը իրականում Իշմե-Դագան I-ն է, որը մահացել է մ.թ.ա. 1756 թ-ին: Արա I Գեղեցիկը արքա է հռչակվել մ.թ.ա. 1769 թ-ին և ակնհայտ է, որ Խորենացին ու Չամչյանը այստեղ ևս չեն սխալվել: Ավելին, աղբյուրները հայտնում են, որ Շամիրամը իշխել է 42 տարի[1]: Ինչպես արդեն ասվեց, Իշմե-Դագան I-ը մահացել է մ.թ.ա. 1756 թ-ին, որից հետո էլ հենց պետք է հաշվել «շամիրամյան» 42 տարին: Այսպիսով ակնհայտ է, որ մ.թ.ա. XIX դարի վերջում կամ XVIII դարի սկզբում ծնված, մ.թ.ա. 1780-1770-ական թվականներին Իշմե-Դագան I-ի հետ ամուսնացած և մ.թ.ա. 1756 թ-ից հետո էլ 42 տարի իշխած Շամիրամը, որը մահացել է մ.թ.ա. 1714 թ-ին, լիովին կարող էր լինել Արա I Գեղեցիկի և նրա որդի Արա II Կարդոսի ժամանակակիցն ու մարտական գործողություններ ձեռնարկել հայերի դեմ սկզբում մ.թ.ա. 1743 թ-ին, իսկ հետո էլ իր բանակով մասնակցել մ.թ.ա. 1725 թ-ին տեղի ունեցած մարտերին: Այսինքն Շամիրամի քաղաքական գործունեության ավարտը կարելի է թվագրել մ.թ.ա. 1725 թ-ով[2], նրա մահը՝ մ.թ.ա. 1714 թ-ով, իսկ քաղաքացիական պատերազմի տարիների Ասորեստանի վերջին արքայի գահակալումը ավարտվում է մ.թ.ա. մոտավորապես 1700 թվականով[3]:

Հայերի դեմ մղված ծանր պատերազմից հետո Ասորեստանը արագ տեմպերով սկսեց թուլանալ, իսկ այն բանից հետո, երբ մ.թ.ա. 1740 թ-ին Մութ-Ասկուրը զոհ գնաց ակնհայտորեն իր մոր կողմից հղացած պալատական դավադրությանը[4], Ասորեստանում սկիզբ առավ ու երկար տասնամյակներ շարունակվեց քաղաքացիական իսկական մի պատերազմ: Կյանքը ցույց տվեց, որ Հին աշխարհի ամենագեղեցիկ և իշխանատենչ կանանցից մեկը այդպես էլ չկարողացավ դրսևորել իրեն քաղաքական ասպարեզում: Մութ-Ասկուրի մահվանից հետո Ասորեստանի տարբեր մասերում տարբեր ժամանակներում իրենց արքա հռչակեցին Ռիմուշը, Ասինումը, Պուզուր-Սինը, Ասսուր-դուգալը,

---

[1] Դիոդորոս Սիկիլացի «Պատմական գրադարան», գիրք 2, գլուխ 20, մաս 1-2, Орозий. История против язычников II 3, 1:

[2] Դատելով Խորենացու հաղորդումներից՝ Գիրք 1, գլուխ 17:

[3] Տես՝ http://web.archive.org/web/20080511203747/http://www.genealogia.ru/projects/lib/catalog/rulers/0.htm

[4] Դատելով Խորենացու հաղորդումներից՝ այս արքան զոհ է գնացել սեփական մոր հղացած դավադրությանը (Գիրք 1, գլուխ 17):

Ասսուր-ապլա-ադինը, Նասիր-Սինը, Սին-Նամիրը, Իպկի-Իշուրը, Ադադ-Ցալուլը և Ադասին[1]:

[1] Ցանկը ըստ - http://web.archive.org/web/20080511203747/http://www.genealogia.ru/projects/lib/catalog/rulers/0.htm

Գլուխ 9
Արա II Կարդոս (մ.թ.ա. 1743-1725)

Արա I Գեղեցիկի որդու գործողությունները և նրա գահակալման ռազմա-քաղաքական իրադարձությունները ևս մեծ ճշգրտությամբ համապատասխանում են Մերձավոր Արևելքի իր ժամանակի պատմությանը:

Այս արքայի մասին տեղեկությունները ցրված են Մովսես Խորենացու երկի մի քանի գլուխներում: Այսպես. «*Արայի* ***(Արա I Գեղեցիկի (մ.թ.ա. 1769-1743 – Մ. Հ.)*** *մասին այսքանը բավական է կարճառոտ հիշատակել: Նա տարիներ ապրելով ծնավ Կարդոսին (****Արա II Կարդոսին (մ.թ.ա. 1743-1725) – Մ. Հ.)****»*[1], «*Արայան Արա (****Արա II Կարդոս (մ.թ.ա. 1743-1725) – Մ. Հ.)****. սա մեր Արայի (****Արա I Գեղեցիկի (մ.թ.ա. 1769-1743 – Մ. Հ.)*** *որդին է, որին Շամիրամը Արա կոչեց և մեր աշխարհի վերակացության գործը նրան հավատաց»*[2], «*Իսկ Շամիրամը դեռ իր կենդանության ժամանակ Արայի (****Արա I Գեղեցիկի (մ.թ.ա. 1769-1743 – Մ. Հ.)*** *որդուն, որ ծնած էր նրա սիրելի կնոջից՝ Նվարդից և տասներկու տարեկան երեխա էր մնացել Արայի մահվան ժամանակ, դեպի Արա Գեղեցիկը տածած գորովի պատճառով՝ նրա անունով կոչում է Արա և նշանակում է մեր աշխարհի վերակացու, մտերմաբար նրա վստահացած լինելով. և ասում են, թե նա Շամիրամի դեմ պատերազմում մեռավ»*[3],- հայտնում է Մովսես Խորենացին:

…Շամիրամի արկածախնդրության տապալումից, կրած կորուստներից և հատկապես իրենց սիրելի արքայի զոհվելուց հետո հայերը լցված էին վրերժխնդրությամբ: Ընդ որում հասկանալի էր, որ իրական մեղավորը ոչ այնքան Ասորեստանն էր, թեև վերջինիս մեղքի բաժինն էլ էր հսկայական, այլ՝ Բաբելոնը: Արդյունքում զոհված արքայի որդին՝ Հայոց թագավորության նոր արքա հռչակված Արա II Կարդոսը, մարտական գործողություններ սկսեց հենց Բաբելոնի դեմ[4]:

Սկիզբ առան իրադարձություններ, որոնք համաշխարհային պատմական տրադիցիայում ավանդաբար կապվում են սեմիտական տարբերակում «կաս(շ)ու» անվանվող մարդկային խմբի հետ[5]: Ավանդաբար ընդունված է կիրառել անվան հենց այս տարբերակը, թեև առավել ճշգրիտ է կիրառել «Կարդու» անվանումը, ինչպես մարդկային այս խումբը ինքն է անվանել իրեն[6]: Ստորև կարճության, ինչպես նաև կանխակալ վերաբերմունքի

---

[1] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 15:
[2] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 19:
[3] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 20:
[4] «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 1»-ում այս իրադարձությունը անվանված է Հայ-բաբելոնյան II պատերազմ (մ.թ.ա. 1742-1711) (էջ 28):
[5] Ստորև կհիմնավորվի, որ մենք պատահականորեն չէ, որ զերծ ենք մնում «ցեղ» կամ «ցեղային միություն» տերմինների կիրառումից:
[6] Տես օրինակ Մովսիսյան Ա. Ե., Հայոց..., էջ 20:

մեջ չմեղադրվելու համար, առժամանակ կկիրառենք «Կարդու» տերմինը նաև մենք՝ համառոտ կերպով դիտարկելով Բաբելոնի և «Կարդու»-ների ռազմա-քաղաքական հարաբերությունների պատմությունը:

«Կարդու»-ների մասին առաջին հիշատակությունը պատկանում է մ.թ.ա. 1742 թ-ին, երբ Գանդաշի կողմից ղեկավարվող «Կարդու»-ների բանակը ծանր հարված հասցրեց Հյուսիս-արևմտյան Միջագետքին: Բաբելոնի բանակը թողեց հիշատակված տարածքները, իսկ «Կարդու»-ները Հյուսիս-արևմտյան Միջագետքում և Հյուսիս-արևելյան Ասորիքում հիմնադրեցին մի իշխանություն, որը կոչվեց Կարդունիասի իշխանություն[1]: Մ.թ.ա. 1741 թ-ին «Կարդու»-ները հարվածեցին արդեն Միջագետքի կենտրոնական հատվածին, ասպատակեցին Նիպպուրի շրջակայքը և նահանջեցին[2]: Մ.թ.ա. 1740 թ-ին Գանդաշը գործում էր արդեն Բաբելոնի շրջակայքում, սակայն այս անգամ Բաբելոնի արքա Սամսու-իլունային (մ.թ.ա. 1750-1712) հաջողվեց պարտության մատնել և հետ մղել վերջինիս դեպի հյուսիս[3]:

Մ.թ.ա. 1730 թ-ին հարձակման անցավ արդեն Բաբելոնի բանակը և ասպատակեց Կարդունիասի իշխանության ազդեցության ոլորտում գտնվող Էշնունայի շրջակայքը[4]: Զարգացնելով հաջողությունը՝ մ.թ.ա. 1727 թ-ին Բաբելոնի բանակը ասպատակեց Հայաստանի հարավային սահմանները, սակայն ստիպված եղավ նահանջել[5]: Հայաստանի ուղղությամբ նոր և առավել վճռական հարձակում Սամսու-իլունան, դաշնակցած Շամիրամի հետ, ձեռնարկեց մ.թ.ա. 1725 թ-ին: Թշնամական բանակը մտավ Կորճայքի տարածք, սակայն Կորդուքի ճակատամարտում երեսնամյա Արա II Կարդոսի գլխավորած Հայոց թագավորության բանակին հաջողվեց հետ շպրտել թշնամուն: Դժբախտաբար այս անգամ ևս, ինչպես և իր հայրը, Հայոց արքան ընկավ մարտի դաշտում[6]: Սակայն Բաբելոնն էլ էր լուրջ կորուստներ կրել և ամենաշատը, որ կարողացավ անել Սամսու-իլունան, դա մ.թ.ա. 1722 թ-ին Հայաստանի հարավային սահմանները մի վերջին անգամ ասպատակելն ու նահանջելն էր[7]:

---

[1] Дьяконов И. М., История..., с. 386.
[2] Дьяконов И. М., История..., с. 386.
[3] Дьяконов И. М., История..., с. 387, Սամսու-իլունայի գահակալման 9-րդ տարին բնութագրվում է, որպես. «*Տարի, երբ Սամսու-իլունա արքան հաղթեց կասսուների բանակի ողջ հզորությանը*»:
[4] Дьяконов И. М., История..., с. 388.
[5] Дьяконов И. М., История..., с. 388.
[6] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 20:
[7] Дьяконов И. М., История..., с. 388.

Գլուխ 10
Անուշավան Սոսանվեր (մ.թ.ա. 1725-1662)

Արա II Կարդոսի որդի և հաջորդ Անուշավան Սոսանվերի օրոք «Կարդու»-ների և Բաբելոնի հակամարտությունը շարունակվեց: Ընդ որում շուտով պարզվեց, որ Բաբելոնը այս կամ այն չափով հաջող պատերազմում էր մեծապես միայն Սամսու-իլունայի շնորհիվ, որի մահվանից հետո նրա թողած թագավորությունը անկում ապրեց: Մ.թ.ա. 1711 թ-ին «Կարդու»-ները և Էլամի թագավորության բանակը լայնամասշտաբ հարձակման անցան Կենտրոնական ու Հարավային Միջագետքի ուղղությամբ և վերջակետ դրեցին Բաբելոնի տարածաշրջանային կարգավիճակին[1]: Այսուհետ, չնայած նրան, որ Բաբելոնում արքայական իշխանությունը պահպանվեց, որևէ տարածաշրջանային դերի մասին վերջինս արդեն խոսել անգամ չէր կարող: Դրանից հետո Բաբելոնի արքաների իշխանությունը տարածվում էր առավելագույնը միայն Բաբելոն քաղաքի ու հարակից տարածքների վրա: Առաջ անցնելով ավելացնենք, որ հենց այս ժամանակներից Բաբելոնի պետությունը սկսեց դանդաղորեն մահանալ և իր վերջը գտավ մ.թ.ա. 1595 թ-ին, երբ վերջնականապես ընկավ Կարդունիասի իշխանության գերիշխանության տակ: Հատկանշական է, որ առաջինը իրեն Բաբելոնի արքա հայտարարած Կարդունիասի հերթական իշխան Ագում II Գթության սուրը (Գագրիմե՝ mAg-gu-um) (մ.թ.ա. 1571-1549) ընդունեց և իր հաջորդներին փոխանցեց մի տիտղոս, որում ընդգծվում էր վերջինիս անբեկանելի կապը Հայաստանի հետ. «***Կասսուի***[2] *և Աքքադի արքա, լայնարձակ Բաբելոն երկրի արքա, Տուպրաշի հաղթահարող, Ալմայի և Պադնայի արքա,* ***Կուտիների*** *արքա*»: Արքայական այս տիտղոսը ցույց է տալիս, որ Կուտիումը, որը վաղուց արդեն հիմնավոր կերպով տեղադրվում է Հայաստանի հարավում՝ Կորճայքի ու Պարսկահայքի, ինչպես նաև Վասպուրականի հարավային գավառների տարածքում, ընդգրվել է Կարդունիասի իշխանության տարածքում, ինչը լրացուցիչ անգամ ցույց է տալիս իշխանության անառարկելի կապը Հայաստանի հետ[3]:

Եվ այսպես, մ.թ.ա. XVIII-րդ դարի կեսերից Բաբելոնի վրա է հարձակվում մարդկային մի խումբ, որը.

---

[1] Дьяконов И. М., История..., с. 389. Բաբելոնի հերթական արքա Աբու-էշուն (մ.թ.ա. 1712-1684) բաբելոնյան սեպագրերին հատուկ ոճով հայտնում է «կասսուներ»-ի դեմ ձեռք բերված հաջողության մասին, սակայն ընդհանուր քաղաքական իրավիճակի վերլուծությունը ստեղծում է լրիվ հակառակ պատկեր:

[2] Дьяконов И. М., История..., с. 419-420. Բանաձևը գրվել է բաբելոնական սեպագրով և «Կասսու» տերմինի կիրառումը պայմանավորված է հենց դրանով:

[3] Մանրամասն տես՝ Մովսիսյան Ա. Ե., Բարեպաշտ արքաների աշխարհակալություն: Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Երևան, 1997, Մովսիսյան Ա. Ե., Հայաստանը…, Երևան, 2005):

ա) որպես արշավանքի մեկնակետ ունեցել է Հայկական լեռնաշխարհը[1],

բ) ունի ընդգծված հնդեվրոպականություն[2],

գ) հենց այդ ժամանակներում ունի գործող մի արքա, որին կոչում էին «Կարդու», ինչը, շարադրված փաստերի համակարգային վերլուծության ֆոնի վրա, բերում է մեծապես հիմնավորված մի հետևության, որ Բաբելոնի դեմ մարտական գործողություններ մղող բանակի ռազմիկները անվանվել են ըստ իրենց արքայի երկրորդ անվան[3] (կամ մականվան),

դ) ինքն իրեն անվանում էր «Կարդու», իսկ իր ստեղծած իշխանությունը՝ «Կարդունիասի իշխանություն»: Այս կապակցությամբ չափազանց տեղին է Արտակ Մովսիսյանի դիտարկումը. «*Անջատելով վերջավորությունները՝ կստանանք մաքուր տեղանունը՝ Քարդու, որը Հայաստանի հնագույն անվանումներից է: Այդ անվամբ է Հայաստանը հանդես գալիս նաև Աստվածաշնչի հին ասորական և հին արաբական թարգմանություններում*»[4]: Թույլ տանք մեզ ավելացնել միայն, որ ամենայն հավանականությամբ մի կողմից Հայաստանի հարավային նահանգը՝ Կորճայքը (Կարդուքը), իր անվանում ստացել է հենց այն պատճառով, որ այստեղ տեղի ունեցած ճակատամարտում է իր հոր ողբերգական ճակատագիրը կիսել Հայոց հերթական արքան, մյուս կողմից էլ՝ որպես Միջագետքին առավել մոտիկ երկրամաս, Հայաստանը նախևառաջ հենց որպես Կարդուք են ընկալել միջագետքյան հարավային հարևանները՝ ասորիները մասնավորապես և սեմիտները ընդհանրապես:

Հատկանշական է, սակայն, որ այսպես կոչված «Կարդուների արշավանք»-ը, իր ռազմա-քաղաքական հսկայական հետևանքներով հանդերձ, այնուհանդերձ մնում է երկրորդ և նույնիսկ երրորդ դերերի վրա՝ ի համեմատ Անուշավան Սոսանվերի գահակալման ժամանակ տեղի ունեցած երկու այլ խոշոր իրադարձությունների: Իրոք, Սամսի-իլուայի թագավորության վերջին շրջանում «Կարդու»-ների դեմ ծանր ընթացք ստացած պատերազմի արդյունքում Բաբելոնն արդեն իսկ դեպի անկում էր գնում և որպես տարածաշրջանային գերտության նրա կործանումը առժամանակ հետաձգեց թերևս միայն Արա II Կարդոսի զոհվելը: Այսինքն, չթերագնահատելով հանդերձ Անուշավանի գործունեությունը, կարող ենք այնուամենայնիվ փաստել, որ Հայոց այս արքայի ներդրումը Բաբելոնի անկման հարցում ավելի շատ կայանում է նրանում, որ նա կարողացավ հաջողությամբ ավարտին հասցնել

---

[1] Տես օրինակ Մովսիսյան Ա. Ե., Հայոց..., էջ 18-19:
[2] Տես օրինակ Մովսիսյան Ա. Ե., Հայոց..., էջ 19:
[3] Նմանատիպ բազում օրինակներ կարելի է հանդիպել հետագայում: Մասնավորապես, XVII դարի սկզբին Աբբաս I Մեծի (1587-1629) կողմնակիցներին կոչում էին «շահսուվարներ», Նապոլեոնի կողմնակիցները կոչվում էին «բոնապարտիստներ», իսկ Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում գերմանական զավթիչներին ընդունված էր անվանել նաև «հիտլերականներ»:
[4] Մովսիսյան Ա. Ե., Հայոց..., էջ 20:

հոր սկսած գործը և քաղաքական ասպարեզից վերջնականապես դուրս մղել արդեն իսկ մահացու վիրավորված հսկային:

Իսկ որո՞նք էին այնումենայնիվ այն երկու իրադարձությունները, որոնք ստիպեցին մեզ Բաբելոնի նման գերտերության ոչնչացմանը Անուշավան Սոսանվերի քաղաքական կենսագրության մեջ հատկացնել երկրորդական և նույնիսկ երրորդական դեր:

«Հաքսոսներ»-ի[1] ***արշավանք ու Եգիպտոսի նվաճում, ինչպես նաև «Արիական արշավանքներ»:*** Այս մասին շատ է գրվել, այդ թվում նաև տողերիս հեղինակի կողմից[2], և կարծում ենք, որ հսկայական քաղաքական ու էթնոմշակութային նշանակություն և հետևանքներ ունեցած հենց այս իրադարձություններն են հանդիսանում Անուշավան Սոսանվերի քաղաքական գործունեության զարդերը: Քննարկվող թեմայի առումով նպատակահարմար չգտնելով մանրամասն անդրադառնալ ինքնին առանձին քննարկման արժանի այս հարցերին, ավելացնենք միայն, որ, համաձայն մեր ուսումնասիրությունների, իրականում, ի դեմս այս արշավանքների մասնակիցների, մենք գործ ունենք «Կարդու»-ների քաղաքական ժառանգորդների հետ, որոնք մ.թ.ա. 1710 թ-ին նվաճեցին Եգիպտոսը, իսկ մ.թ.ա. մոտ 1700 թվականին էլ իրականացրեցին «Արիական արշավանքներ»-ը դեպի արևելք:

Այս առումով պետք է անդրադառնալ նաև հարցի մեկ և գործնականում չքննարկված այլ կողմին: Առաջին հայացքից թերևս զարմանք կարող է հարուցել այն հանգամանքը, որ, թեև Անուշավան Սոսանվերի օրոք Հայոց թագավորությունը, ի դեմս իր իսկ ստեղծած Արիական տերության, հասավ աննախադեպ մեծության և քաղաքական գերակայության[3], սակայն նույն այդ արքան Պատմահոր կողմից ստանում է ոչ միայն համեստ, այլև նույնիսկ որոշակիորեն բացասական գնահատական[4]:

Կարծում ենք, որ այս առեղծվածի բացատրության հիմքում ընկած է Մովսես Խորենացու անմնացորդ հայրենասիրությունն ու հայրենանվերությունը: Բանն այն է, որ, թեև «Հաքսոսներ»-ի ու «Արիական արշավանքներ»-ի արդյունքում գործնականում ողջ Մերձավոր ու Միջին Արևելքը ընկավ Հայոց թագավորության գերիշխանության տակ, սակայն Հայաստանը և նույն այդ Հայոց թագավորությունը հեռանկարային առումով հսկայական կորուստներ կրեցին: Արիական տերության միասնությունը պահպանելու նպատակով վերջինիս տարբեր մասերում տեղավորված Հայկական բանակները կատարում էին բնակչության անվտանգության պահպանման, սահմանապահ և խաղաղապահ գործառույթներ: Սակայն

---

[1] «Հաքսոս» անվանումը այստեղ օգտագործվում է պայմանականորեն, ընդամենը խառնաշփոթից խուսափելու համար:

[2] Տես «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 1», էջ 29-30:

[3] Արիական տերությունը, նախորդելով Աքեմենյանների տերությանը և գործնականում հավասար լինելով վերջինիս չափերի տեսակետից, իր ժամանակի համար աննախադեպ մի երևույթ էր:

[4] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 20:

արդյունքում պարզվեց, որ Հայաստանը աստիճանաբար զրկվում էր իր առողջ, ստեղծարար և երիտասարդ ուժից, քանի որ այլ տարածքներում տեղակայված բանակների ռազմիկները հիմնականում մերվում էին տեղական բնակչության հետ ու հետագայում, թեև շատ դանդաղ, բայց այնուամենայնիվ կորցնում իրենց ազգային դիմագիծը: Արդյունքում այդ տարածքի բնակչությունը գենետիկորեն ու մշակութային տեսանկյունից ուժեղանում էր և զարգանում, իսկ Հայաստանը մարդկային ստեղծագործական առողջ ռեսուրսի կորստի պատճառով թուլանում էր:

Այսպիսով ստեղծվեց մի իրավիճակ, երբ Հայաստանը և հայ ժողովուրդը, ըստ էության զոհելով իրեն, մարդկության համար ապահովեց նրա ամենամեծ առաջընթացներից մեկը: Գերիշխանության ոլորտում անմիջականորեն ընդգրկված, ինչպես նաև հարակից երկրներ ծանոթացան առաջավոր գիտական նվաճումներին (հեծելազոր, երկաթե ճաղավոր անիվ և մարտակառք, աստղագիտություն, երկաթագործություն, արվեստի, ամրոցաշինության ու ընդհանրապես շինարարության յուրահատուկ ձևեր և այլն), ինչպես նաև ստացան հսկայական գենետիկ պոտենցիալ, որից զրկվեց Հայաստանը: Այս կապակցությամբ խիստ տեղին են Լ. Գումիլևի այլ առիթով ասված խոսքերը, որ. «*Նրանց... կործանեցին ոչ թե պարտությունները, այլ հաղթանակները*»: Հայաստանից դուրս տեղակայված ռազմիկները անխուսափելիորեն հարաբերվում, իսկ հաճախ էլ ընտանիք էին կազմում տեղաբնիկ կանանց հետ և ունենում երեխաներ: Իսկ փոքր երեխաների դաստիարակությամբ որպես կանոն զբաղվում են հենց կանայք և բնականաբար ծնված երեխաները գենետիկորեն արդեն իսկ լինելով կիսահայ, մշակութային տեսանկյունից գրեթե լիովին ենթարկվում էին տեղական մշակույթի ազդեցությանը: Արշավանքի ելած Հայ ռազմիկների հետագա սերունդները մի քանի տասնամյակում արդեն իսկ դադարում էին իրենց հայ զգալ: Նրանց մոտ աստիճանաբար սկսում էր բացակայել Հայաստանի, որպես Հայրենիքի, հասկացությունը և նրանք արդեն առաջնորդվում էին իրենց տարածաշրջանի շահերով: Օտարացման այս անխուսափելի գործընթացի տրամաբանական արդյունքում ստեղծված պետությունը, ներքնապես չունենալով ամուր լինելու սոցիալ-տնտեսական հիմք, դատապարտված էր փլուզման հենց իր իսկ ներքին զարգացումների արդյունքում, որն էլ տեղի ունեցավ[1]:

Այսպիսով Անուշավան Սոսանվերը, որը տարածքային ընդգրկման տեսանկյունից աննախադեպ կերպով լայնացրեց Հայոց թագավորության (Արիական տերության) սահմանները, վաղանցիկ քաղաքական այդ հաջողության արդյունքում ըստ էության լուրջ վնաս հասցրեց Հայոց թագավորության ժողովրդագրական, հետևապես նաև ռազմական հզորությանը: Պատահական չէ, որ ոչ լրիվ դար ու կես իր գոյությունը

[1] Չնայած դրան, սակայն, երկար հարյուրամյակներ, իսկ հաճախ էլ մինչ այսօր, երկրագնդի մի մեծ մասի բնակչությունը, թեկուզ և արմատներով, գտվում է մեկ ընդհանուր մշակութային, գենետիկ և հոգևոր տարածքում:

շարունակած Արիական տերության փլուզումից հետո Հայոց թագավորությունը ոչ միայն ինքը կտրուկ թուլացավ, այլև տրոհվեց առանձին և գործնականում անկախ Հինգ թագավորությունների՝ Արմենի, Հայա(սա), Միտանի, Արարատ և Կիլիկիա[1]:

Հենց այս ամենն է, որ իրապես խորաթափանց մեր Պատմահորը ստիպել է այդքան սառը վերաբերմունք դրսևորել Անուշավան Սոսանվերի ու նրա նվաճումների նկատմամբ:

[1] Այս դարաշրջանի ռազմական բովանդակությունը մանրամասն ներկայացված է «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 2»-ում:

Գլուխ 11
Պարետից մինչև Հորո (մ.թ.ա. 1662-1194)

Պարետից մինչև Հորո ներառյալ, ի տարբերություն նախկինների, Հայկազունի արքաների մասին տեղեկատվությունը բավականին սուղ է: Կարելի է կարծել, որ մ.թ.ա. XVII դարի կեսերից սկսված և մ.թ.ա. XVI դարի կեսերին ավարտին հասած միասնական պետության անկումից հետո Հայկազունիները Հայաստանում իրական իշխանություն այլևս չեն ունեցել: Վերջիններիս իշխանությունը ամենայն հավանականությամբ կրել է խորհրդանշական բնույթ[1], իսկ առաջին դերերում են եղել Միտանին և Հայա(սա)ն: Արքաների այս շարքում առանձին անդրադառնալ արժե թերևս միայն Հայկակ I-ին (մ.թ.ա. 1381-1363), որը, համաձայն Խորենացու. «*… ապրել է Բելոքոսի ժամանակ և մի անմիտ խռովություն հարուցանելով նրա մեջ մեռել է*»[2]: Կարելի է կարծել, որ այս դեպքում Պատմահայրը, նկատի ունենալով Խեթական թագավորության արքա Սուպիլուլիումա I-ին (մ.թ.ա. 1380-1326), որի դեմ պատերազմում էլ ըստ երևույթին զոհվել է Արմենիի արքան, չի ունեցել ամբողջական տեղեկատվություն, չի իմացել Խեթական թագավորության գոյության մասին և Արմենիի արքայի հակառակորդին սխալմամբ կապել է Ասորեստանի հետ: Հատկանշական է, սակայն, որ մեր կողմից ուսումնասիրվող թեմայի տեսանկյունից առաջին հայացքից «անարդյունավետ» արքաների այս շարքը իրականում մեզ է տրամադրում իր իրականության ամենածանրակշիռ ապացույցներից մեկը:

Սկսած Մովսես Խորենացուց, կազմվել են ժամանակագրական աղյուսակներ, որոնք ցույց են տալիս Հայկազունիների տոհմի Հայոց արքաների և հրեա առաջնորդների միմյանց ժամանակակից լինելու փաստը: Խորենացուց զատ այս հարցին անդրադարձել են նաև մի շարք միջնադարյան հայ պատմիչներ ևս և, եթե հաշվի չառնենք Խորենացուն, ապա ամենալավ աղյուսակը մեր կարծիքով կազմվել է Մխիթար Այրիվանցու կողմից:

Մխիթար Այրիվանցին նախկին բոլոր աղբյուրների, այդ թվում նաև Մովսես Խորենացու հայտնած տվյալների ընդհանրացման հիման վրա կազմել է Հայկազունիների Հայաստանի և հարակից երկրների զուգահեռ պատմությունը, մի աշխատանք, որը թեև շատ ուշագրավ կողմեր ունի, սակայն դեռևս արժանիորեն չի գնահատվել: Այսպես, Այրիվանցին խոսելով Մովսեսի ու իր ժողովրդի Եգիպտոսից հեռանալու և դրան նախորդող ու հաջորդող իրադարձությունների մասին, ասում է (աննշան կրճատումներով). «*… ծնեցին*

---

[1] Նմանատիպ իրավիճակի մենք հանդիպում ենք 640-751 թվականներին, ի դեմս Մերովինգների գահատոհմի «Ալարկոտ արքաներ»-ի:
[2] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 19:

*Հուդային (**Հուդա**[1] **(մ.թ.ա. մոտ 1600-1590) – Մ.Հ.**): Այդ ժամանակ ապրեց Հայկազունի Պարետը (**Պարետ (մ.թ.ա. 1662-1612) – Մ.Հ.**): Հետո Փառեսը (**Հուդայի որդի Փառեսը (մ.թ.ա. մոտ 1590-1531) – Մ.Հ.**) իշխեց հիսունինը տարի և ունեցավ Եզրոնին (**Եզրոն (մ.թ.ա. մոտ 1531-1460) – Մ.Հ.**): Այդ ժամանակ Հայաստանում էր Զավանը (**Զավան (մ.թ.ա. 1568-1531) – Մ.Հ.**): Մովսեսից (**Մովսես (մ.թ.ա. մոտ 1460-1410) – Մ.Հ.**) հետո քսանյոթ տարի (**նկատի է ունեցվում, որ իշխել է Մովսեսի վերջին տարիներին – Մ.Հ.**) թագավորեց Հիսուսը (**Մովսեսի աշակերտ և հետնորդ Հիսուս Նավեին (մ.թ.ա. մոտ 1410-1400) – Մ.Հ.**): Հետո Գոթոնիելը (**Քանանի դատավոր (առաջնորդ) Գոթոնիելը (մ.թ.ա. մոտ 1400-1360) – Մ.Հ.**) դատեց քառասուն տարի: Այս ժամանակ Հայաստանում իշխում էին Հավանակը (**Հավանակ (մ.թ.ա. 1433-1403) – Մ.Հ.**), Վաշտակը (**Վաշտակ (մ.թ.ա. 1403-1381) – Մ.Հ.**), Հայկակը (**Հայկակ I (մ.թ.ա. 1381-1363) – Մ.Հ.**), Ամբակը (**Ամբակ I (մ.թ.ա. 1363-1349) – Մ.Հ.**) և Առնակը (**Առնակ (մ.թ.ա. 1349-1332) – Մ.Հ.**): Իշխեցին Աովթը (**Քանանի դատավոր Աովթ (մ.թ.ա. մոտ 1360-1320) – Մ.Հ.**) և Սեմեգարը (**Քանանի դատավոր Սեմեգար (մ.թ.ա. մոտ 1320-1280) – Մ.Հ.**): Դեբորան ու Բարակը (**Քանանի դատավոր Բարակ, իսկ փաստացի գուշակ Դեբորա (մ.թ.ա. մոտ 1280-1240) – Մ.Հ.**) իշխեցին քառասուն տարի, Գեդեոնը (**Քանանի դատավոր Գեդեոն (մ.թ.ա. մոտ 1240-1200) – Մ.Հ.**)՝ 40 տարի, Աբիմելեքը (**Քանանի դատավոր Աբիմելեք (մ.թ.ա. մոտ 1200-1197) – Մ.Հ.**)՝ 3 տարի, Թովղան (**Քանանի դատավոր Թովղա (մ.թ.ա. մոտ 1197-1174) – Մ.Հ.**)՝ 23 տարի, Յայիրը (**Քանանի դատավոր Յայիր (մ.թ.ա. մոտ 1174-1152) – Մ.Հ.**)՝ 22 տարի: Այս ժամանակ Հայաստանում էին Շավարշը (**Շավարշ I (մ.թ.ա. 1332-1326) – Մ.Հ.**), Նորայրը (**Նորայր (մ.թ.ա. 1326-1302) – Մ.Հ.**), Վստամը (**Վստամ (մ.թ.ա. 1302-1289) – Մ.Հ.**), Կարը (**Կար (մ.թ.ա. 1289-1285) – Մ.Հ.**) և Հորակը (**Հորակ (մ.թ.ա. 1285-1267) – Մ.Հ.**): Յեփթան (**Քանանի դատավոր Յեփթա (մ.թ.ա. մոտ 1152-1146) – Մ.Հ.**) իշխեց 6 տարի, Աբեսան (**Քանանի դատավոր Աբեսա (մ.թ.ա. մոտ 1146-1139) – Մ.Հ.**)՝ 7 տարի, Եղոնը (**Քանանի դատավոր Եղոն (մ.թ.ա. մոտ 1139-1129) – Մ.Հ.**)՝ 10 տարի, Աբտոնը (**Քանանի դատավոր Աբտոն (մ.թ.ա. մոտ 1129-1121) – Մ.Հ.**)՝ 8 տարի, որից հետո իշխեց քաջ Սամփսոնը (**Քանանի դատավոր Սամփսոն (մ.թ.ա. մոտ 1121-1115) – Մ.Հ.**): Հայաստանում այդ ժամանակ իշխեցին Հրանտը (**Հրանտ I (մ.թ.ա. 1267-1242) – Մ.Հ.**), Էնգակը (**Էնգակ (մ.թ.ա. 1242-1227) – Մ.Հ.**), Գլակը (**Գլակ (մ.թ.ա. 1227-1197) – Մ.Հ.**), Հորոն (**Հորոն (մ.թ.ա. 1197-1194) – Մ.Հ.**) և Զարմայրը (**Զարմայր (մ.թ.ա. 1194-1180) – Մ.Հ.**)»*[2]:

Այսպիսով Հայոց արքաների և հրեա առաջնորդների՝ միմյանց ժամանակակից լինելու փաստը ըստ Մխիթար Այրիվանցու և Հայոց արքաների գահակալության տարիները ըստ Չամչյանի ու հրեա առաջնորդների

---

[1] Այստեղ և հետագայում ավետարանական անունները և տեղանունները տրվում են ըստ Ավետարանի հայերեն թարգմանության:

[2] Մխիթար Այրիվանցի «Ժամանակագրական պատմություն» (ռուսերեն), ՍՊԲ 1869:

գահակալության տարիները ըստ համաշխարհային աղբյուրների մեկ սխեմայում ունեն հետևյալ տեսքը.

Հայոց Հայկազունիներ	*գահակալության տարիներ*	*գահակալության տարիներ*	*Հրեական առաջնորդներ*
Անուշավան Սոսանվեր	մ.թ.ա. 1725-1662	մ.թ.ա. մոտ 1737-1670[1]	Աբրահամ
Պարետ	մ.թ.ա. 1662-1612	մ.թ.ա. մոտ 1670-1620[2]	Իսահակ
		մ.թ.ա. մոտ 1620-1600[3]	Հակոբ
Արբակ	մ.թ.ա. 1612-1568	մ.թ.ա. մոտ 1600-1590[4]	Հուդա
Զավան	մ.թ.ա. 1568-1531	մ.թ.ա. մոտ 1590-1531	Փառես
Փառնակ I	մ.թ.ա. 1531-1478	մ.թ.ա. մոտ 1531-1460[5]	Եզրոն

[1] Համաձայն «մասսորետյան տրադիցիա»-ով կազմված ու այժմ էլ Իսրայելում գործածության մեջ գտնվող Հրեական պաշտոնական օրացույցի հիման վրա վերականգնված «Աստվածաշնչյան ժամանակագրության»՝ Աբրահամը Խանանեա է տեղափոխվել «աշխարհի արարում»-ից (մ.թ.ա. 3760 թ.) հետո 2023 թ-ին, ինչը համապատասխանում է Գրիգորյան օրացույցի մ.թ.ա. 1737 թ-ին: Իհարկե, հրեական առաջին նահապետների կերպարներում բավականին շատ են վիպական տարրերը և մասնավորապես տրամաբանական ու մարդկային որևէ իրական սահմաններում չեն տեղավորվում Աբրահամի, Իսահակի և այլոց կյանքի ու իշխանության տևողությունները (175-180 տարի), սակայն ակնհայտ է, որ ցանկացած դեպքում մենք այստեղ գործ ունենք լեգենդների քողով պատված պատմական հստակ փաստերի հետ: Եվ այսպես, հրեական նահապետների իշխանության սկզբի տարեթիվը մ.թ.ա. 1737 թ-ը ընդունելուց հետո հնարավորություն է առաջանում վերականգնել նաև Աբրահամի ու նրան հաջորդած նահապետների իշխանության մոտավոր տարիները՝ կյանքի և իշխանության անհավանական տևողությունների ու տարիների փոխարեն առաջարկելով առավելագույն (70-100 տարի) ժամանակաշրջան:

[2] Համաձայն Հրեական պաշտոնական օրացույցի՝ Իսահակի զոհաբերության փորձը տեղի է ունեցել «աշխարհի արարում»-ից հետո 2085 թ-ին, ինչը համապատասխանում է Գրիգորյան օրացույցի մ.թ.ա. 1675 թ-ին: Այդ թվականին Իսահակը 37 տարեկան էր, իսկ Աբրահամը, ըստ Հին կտակարանի, վաղուց արդեն անցել էր 100 տարեկանը: Հաշվի առնելով այս հանգամանքը, կարելի է ենթադրել, որ Իսահակը հաջորդել է Աբրահամին զոհաբերության փորձից շատ քիչ ժամանակ անց:

[3] Համաձայն Հրեական պաշտոնական օրացույցի՝Հակոբը ծնվել է «աշխարհի արարում»-ից հետո 2108 թ-ին, ինչը համապատասխանում է Գրիգորյան օրացույցի մ.թ.ա. 1652 թ-ին: Իսահակը ծնվել է մ.թ.ա. 1712 թ-ին, այսինքն, ընդունելով նրա կյանքի ողջամիտ տևողությունը, տրամաբանական է կարծել, որ Հակոբը հաջորդել է հորը մ.թ.ա. 1620-ական թվականներին:

[4] Համաձայն Հին կտակարանի՝ Հակոբը ծնվել է Իսահակի ու Ռեբեկայի ընտանիքում 20-ամյա ամլությունից հետո: Այսինքն, եթե ընդունենք, որ Իսահակը ունեցել է Հակոբին մոտ 45 տարեկանում, հաշվի առնելով, որ Իսահակը ծնվել է մ.թ.ա. 1712 թ-ին, ստացվում է, որ Հակոբը ծնվել է մ.թ.ա. 1670-ական թվականներին: Ընդունելով նրա կյանքի ողջամիտ տևողությունը, տրամաբանական է կարծել, որ Հուդան հաջորդել է հորը մ.թ.ա. 1600-ական թվականներին՝ արդեն ծեր տարիքում:

[5] Համաձայն Հին Կտակարանի՝ հրեաների «ելք»-ը Եգիպտոսից տեղի է ունեցել Երուսաղեմում գտնվող Սողոմոնի տաճարի կառուցումից 480 տարի առաջ: Սողոմոնի տաճարի կառուցումը ավարտվել է մ.թ.ա. 965 թ-ին, այսինք «Ելք»-ը տեղի է ունեցել մ.թ.ա. 1445 թվականին: Հաշվի առնելով այս հանգամանքը կարելի է ենթադրել, որ 120 տարի ապրած Մովսեսը, սկսելով ղեկավարել հրեաներին բավականին հասուն տարիքում, կառավարել է մոտավորապես մ.թ.ա.

Հայոց Հայկազունիներ	*գահակալության տարիներ*	*գահակալության տարիներ*	*Հրեական առաջնորդներ*
Սուրեն	մ.թ.ա. 1478-1433	մ.թ.ա. մոտ 1460-1410	Մովսես
Հավանակ	մ.թ.ա. 1433-1403		
Վաշտակ	մ.թ.ա. 1403-1381	մ.թ.ա. մոտ 1410-1400[1]	Հիսուս
Հայկակ I	մ.թ.ա. 1381-1363	մ.թ.ա. մոտ 1400-1360	Գոթոնիել
Ամբակ I	մ.թ.ա. 1363-1349		
Առնակ	մ.թ.ա. 1349-1332		
Շավարշ I	մ.թ.ա. 1332-1326	մ.թ.ա. մոտ 1360-1320	Առվթ
Նորայր	մ.թ.ա. 1326-1302	մ.թ.ա. մոտ 1320-1280	Սեմեգար
Վստամ	մ.թ.ա. 1302-1289		
Կար	մ.թ.ա. 1289-1285		
Հորակ	մ.թ.ա. 1285-1267	մ.թ.ա. մոտ 1280-1240	Դեբորա և Բարակ
Հրանտ I	մ.թ.ա. 1267-1242		
Էնզակ	մ.թ.ա. 1242-1227	մ.թ.ա. մոտ 1240-1200	Գեդեոն
Գլակ	մ.թ.ա. 1227-1197	մ.թ.ա. մոտ 1200-1197	Աբիմելեք
Հորո	մ.թ.ա. 1197-1194	մ.թ.ա. մոտ 1197-1174	Թովղա
Զարմայր	մ.թ.ա. 1194-1180		
Շավարշ II	մ.թ.ա. 1180-1137	մ.թ.ա. մոտ 1174-1152	Յայիր
		մ.թ.ա. մոտ 1152-1146	Յեփթա
		մ.թ.ա. մոտ 1146-1139	Աբեսա
Պերճ I	մ.թ.ա. 1137-1102	մ.թ.ա. մոտ 1139-1129	Եյոն
		մ.թ.ա. մոտ 1129-1121	Աբտոն
		մ.թ.ա. մոտ 1121-1115	Սամփսոն
Արբուն	մ.թ.ա. 1102-1075	մ.թ.ա. մոտ 1115-1080	Հեղի
Պերճ II	մ.թ.ա. 1075-1035	մ.թ.ա. մոտ 1080-1020	Սամուել
Բազուկ	մ.թ.ա. 1035-985	մ.թ.ա. մոտ 1020-1012	Սավուղ
		մ.թ.ա. մոտ 1012-972	Դավիթ

Ինչպես տեսնում ենք Մխիթար Այրիվանցու կողմից բերված այս ժամանակաշրջանի Հայկազունի արքաների գահակալության ու կյանքի

1460-1410 թվականներին: Հարկ է նշել նաև, որ մ.թ.ա. 1445 թ-ը հաստատվում է նաև հինեգիպտական ժամանակագրությամբ, համաձայն որի մ.թ.ա. XV դարի առաջին կեսում Եգիպտոսում իշխում էր Պաղեստինում և Ասորիքում լայն նվաճողական քաղաքականություն վարող Թութմոս III-ը (մ.թ.ա. 1503-1450): Կարելի է ենթադրել, որ Պաղեստինում և Ասորիքում հենց այս փարավոնի իրականացրած նվաճումներն են հրեաների մոտ սրել հակաեգիպտական տրամադրությունները: Հատկանշական է, որ Թութմոս III-ի փոքրահասակության շրջանում մինչև մ.թ.ա. 1485 թ-ը Եգիպտոսի փաստացի կառավարումը իրականացնում էր վերջինիս քույր Խեթշեպսուտը, որը լիովին կարող էր լինել այն արքայադուստրը, որը, համաձայն Հին կատակարանի, փրկել է զամբյուղի մեջ դրված ու գետի ալիքներին հանձնված Մովսեսի կյանքը:

[1] Ներառյալ և ներքև՝ տվյալները վերցված են այստեղից - http://web.archive.org/web/20080511203747/http://www.genealogia.ru/projects/lib/catalog/rulers/0.htm

տարիները, ինչպես նաև Միքայել Չամչյանի կողմից նշված կոնկրետ թվականները ևս համընկնում են Հրեա նահապետների կյանքի և գործունեության տարիների հետ, այնքանով իհարկե, ինչքանով որ նման ժամանակագրական զուգահեռ ցանկերը կարող են ընդհանրապես տեսականորեն համընկնել:

Գլուխ 12
Զարմայր (մ.թ.ա. 1194-1180)

Ամենազարմանալի համընկնումներից մեկը, որ գոյություն ունի Չամչյանի գահացանկի և տարածաշրջանի այսպես կոչված «համընդհանուր ընդունված» պատմության հետ, դա Չամչյանի նշած Զարմայրի գահակալության տարիներն են: Պատմահայրը ուղղակիորեն նշում է, որ Զարմայրը, մասնակցել է Տրոյական պատերազմին և զոհվել է այդ պատերազմի ժամանակ: *«Զարմայր. սա Տևտամոսից*[1] *օգնական ուղարկվեց Պրիամոսին եթովպական զորքի հետ և մեռավ հելենացոց քաջերից»*[2],- հայտնում է Պատմահայրը և ավելացնում. «*… և մեր Զարմայրը, որ ասորեստանցիներին հպատակ էր, քիչ մարդով եթովպական զորքի հետ օգնական է եղել Պրիամոսին և այնտեղ հելենացոց քաջերից վիրավորվելով մեռնում է, բայց կկամենայի թե Աքիլլեսից և ոչ թե մի ուրիշ քաջից»*[3]:

Տրոյական պատերազմն ու Տրոյայի կործանումը, որը մոտավորապես տեղադրվում է մ.թ.ա. XII դարում, ներկայումս մասնագետների մեծամասնությունը, վերադառնալով ավանդական տեսակետին, ավելի կոնկրետացնում է համապատասխանաբար մ.թ.ա. 1190-1180 և մ.թ.ա. 1180 թվականներին[4]: Այս տեսակետի ամենածանրակշիռ հիմնավորումներից մեկն այն է, որ Խեթական թագավորության վերջին արքա Սուպիլուլիումա II-ը, որը գահ է բարձրացել մ.թ.ա. 1190 թ-ին, գրեթե հետք չի թողել իր մասին և նրանից հետո Խեթական թագավորությունը տառացիորեն ջնջվել է պատմության թատերաբեմից: Այս հանգամանքը ներկայումս բացատրվում է մ.թ.ա. 1190 թ-ից Բալկանյան թերակղզուց ներխուժումներ սկսած այսպես կոչված «Ծովի ժողովուրդներ»-ի (միկենյան հույներ, աքայացիներ, փռյուգացիներ և այլն)

---

[1] Բացառված չէ, որ ի դեմս «Տևտամոս»-ի մենք գործ ունենք Ասորեստանի հերթական արքա Նինուրտա-ապիլ-էկուլայի (մ.թ.ա. 1192-1180) հետ: Իրոք, եթե Մարական թագավորության արքա Ուվախշատրայի անունը հույները մեզ են փոխանցում անճանաչելիության աստիճան աղավաղված տեսքով («Կիաքսար»), իսկ հայկական պատմական ավանդույթն էլ այս արքային գիտի որպես «(Վ)Արբակես, ապա ինչու հանկարծ ակնհայտորեն «խոսող անուն» ունեցող Նինուրտա-ապիլ-էկուլան չի կարող դառնալ «Տևտամոս»: Հարկ է ավելացնել նաև, որ մ.թ.ա. XII դարի սկզբում Բաբելոնի ու Եգիպտոսի անկման ֆոնին Ասորեստանը Մերձավոր Արևելքում լրջագույն պայքար էր մղում գերիշխանության համար և մեծապես շահագրգռված էր «Ծովի ժողովուրդներ»-ի դեմ պայքարով:

[2] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 19:

[3] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 32:

[4] Ինչպես հայտնվում է ԱՄՆ գիտությունների ակադեմիայի պաշտոնական կայքէջում, Նյու-Յորքի Ռոկֆելերյան համալսարանի դասախոս Մարչելո Մանյասկոն և «Լա-Պլատա» աստղադիտարանի աշխատակից Կոնստանտինո Բայկոուզիսը կարողացել են հաշվարկել Ոդիսևսի վերադարձի տարեթիվը Իթաքա և եկել են եզրակացության, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել մ.թ.ա. 1178 թվականին (տես՝ http://grani.ru/Society/Science/m.138086.html): Այսպիսով պարզ է դառնում, որ Տրոյան ընկել է մ.թ.ա. 1180 թ-ին, իսկ Ոդիսևսի «Ոդիսական»-ը տեղի է ունեցել լիովին ողջամիտ ժամկետում՝ երկու տարում:

մասայական ու չտեսնված ավերիչ արշավանքով, որոնք, ըստ Եգիպտոսի փարավոն Ռամզես III-ի (մ.թ.ա. 1184-1153) «Անալներ»-ի, կործանեցին Խեթական թագավորությունը և հենց նույն ժամանակ էլ 10 տարվա պաշարումից հետո գրավեցին Տրոյան: Այսպիսով Զարմայրի զոհվելու տարին ևս ճշգրիտ կերպով համընկնում է այն թվականի հետ, երբ ընկել է Տրոյան: Հետաքրքիր է նաև, որ ըստ Մխիթար Այրիվանցու Զարմայրը իշխում էր այն ժամանակ, երբ ընկավ Տրոյան, իսկ. «*Հռոմեացիների վրա թագավորեց Էնեյոսը (Էնեյոս (մ.թ.ա. 1179-1176) – Մ.Հ.)*»[1]:

Սակայն հետազոտողների համար իրենից միշտ էլ իրենից որոշակի հանելուկ է ներկայացրել Մովսես Խորենացու հաղորդումն այն մասին, որ Արմենիի արքա Զարմայրը մարտնչել է Տրոյայի պատերի տակ... ղեկավարելով այդ թվում նաև ***եթովպիացիներից*** կազմված բանակը[2]: Այն որ Տրոյայի պաշտպանությանը մասնակցել են «արիմներ»-ը[3] Կիլիկիայից, փաստ է[4], այն մասին, որ Զարմայրի հետ եղել են նաև Հայ ռազմիկներ - ուղղակիորեն տեղեկացնում է Խորենացին, բայց... այնուհանդերձ, ***ի՞նչ եթովպիացիներ***: Բանն այն է, որ եթե խոսքը գոնե եգիպտացիների մասին լիներ, էլի կարելի էր որոշակի վերապահումներով համաձայնել, բայց չէ՞ որ Եթովպիան Եգիպտոսից էլ հեռու է և այն երբեք էլ չի մասնակցել Եգիպտոսից հյուսիս գտնվող այլ երկրների գործերին: Կարելի է նույնիսկ փաստել, որ, կոպիտ ասած, Եթովպիան գործ ուներ միայն Եգիպտոսի հետ, իսկ Եգիպտոսից զատ էլ ոչ-ոք այլևս մեծ հաշվով չգիտեր Եթովպիայի մասին: Ակնհայտ է, որ այստեղ պետք է լինի որևէ այլ բացատրություն: Թույլ տանք մեզ կարծել, որ ստորև շարադրվածը գործնականում բացահայտում է «եթովպական առեղծված»-ը՝ լույս սփռելով մեր պատմության ամենաանբացատրելի հանելուկներից մեկի վրա:

Համաձայն Ա. Ի. Իվանչիկի, Տրոյական պատերազմի ժամանակ հիշատակվող «եթովպացիներ»-ը իրականում որևէ կապ չունեն Եգիպտոսից հարավ բնակվող եթովպացիների հետ, իսկ Իլիականում էլ չեն հիշատակվում

---

[1] Մխիթար Այրիվանցի «Ժամանակագրական պատմություն» (ռուսերեն), ՍՊԲ 1869:

[2] Համարձակություն ենք վերցնում մեզ վրա պնդել, որ սույն առեղծվածի բացատրությունը առաջինն իրականացնում ենք հենց մենք:

[3] Մասնագետները գրեթե միակարծիք են, որ արիմները բնակվելիս են եղել Կիլիկիայում (տես՝ www.antiquitas.ru/arimy-arimi/): Արիմներին առաջինը հայերի հետ ուղղակիորեն կապեց Ի. Մարկվարտը: Կարծում ենք, որ «Արիմ» անվանումը ուղղակիորեն կապված է «Արմեն» անվանման հետ: Այսպես, «Արմա(ե)ն» տերմինը բառացիորեն նշանակում է «արիական մարդ»: "man" բառը առաջացել է պրոտո-գերմանական (արիական) *mannaz կամ *manwaz («մարդ») բառից, որը «մարդ» բառի ամենահին կիրառություններից մեկն է և հանդիպում է հնդեվրոպական լեգենդար «Manu» կերպարի տեսքով: Տերմինը կարելի է համեմատել օրինակ սանսկրիկտյան բառապաշարի կամ չեխական "mu" («մարդ, «տղամարդ») տերմինի հետ: Ավելացնենք, որ հին հայերենում եղել է տղամարդու «Մանվազ» անունը, որը և ամենայն հավանականությամբ հանդիսանում է պրոտո-գերմանական (արիական) *mannaz կամ *manwaz («մարդ») հիմքը: Այստեղ ավելորդ չէ հիշել նաև Մովսես Խորենացու կողմից հիշատակվող «Մանվազին, որը Հայկ Նահապետի սերնդից էր» (Գիրք 1, գլուխ 12):

[4] Տես՝ Իլիական, Բեոտիա, երգ II, տողեր 780-784:

որպես սևամորթներ[1]: Ավելին, ոչ միայն «եթովպ» բառն է հին հուներենում ունեցել «թխամաշկ» իմաստը, այլև «եթովպացի» հասկացությունը մինչև VI դարը ընդհանրապես չի ունեցել «սևամորթ» իմաստը և նրա տակ երբեք էլ նկատի չեն ունեցել բուն Եթովպիայի բնակիչներին: Օրինակ, Հիսիոդոսի մոտ «եթովպացիներ»-ը առանձնացված են «սևամորթներից»[2]: Միայն VI դարից հետո է այդ բառը աստիճանաբար ձեռք բերել «ներկայիս եթովպացի» կամ «սևամորթ» իմաստը:

Հատկանշական է, սակայն, որ երբ նյութը ուսումնասիրում ենք ավելի խորությամբ, ի հայտ են գալիս նորանոր և ավելի հետաքրքիր մանրամասներ:

Այսպես, հին հույները համոզված էին, որ «եթոդվպացիներ»-ը բնակվում էին ոչ թե հարավում, այլ արևելքում: Օրինակ, Հերոդոտոսը, հստակորեն տարբերակելով հարավում գտնվող «եթովպացիներ»-ից, հայտնում է արևելքում բնակվող «եթովպացիներ»-ի մասին: Իրենց հերթին Փոքր Ասիայում հաստատված փռյուգացիները բավականին երկար ժամանակ ցույց էին տալիս այն ճանապարհը, որով «եթովպացիներ»-ի բանակը շարժվել է Տրոյային օգնության, ինչը ևս ուղղակիորեն վկայում է այն մասին, որ վերջինս, անցնելով Փոքր Ասիայով որպես միջանկյալ մի երկրով, Տրոյային է մոտեցել արևելքից: Ավելին, հունական պատմական ավանդույթում Տրոյական պատերազմի ժամանակ հիշատակվող և այդ պատերազմում էլ զոհված «եթովպացիներ»-ի առաջնորդը, որը ստացել է «Մեմնոն» անունը, բնութագրվում է որպես շատ գեղեցիկ մի տղամարդ, որին, համաձայն Դիոդորոս Սիկիլացու, Ասորեստանի արքա «Տևտամոս»-ը ուղարկում է օգնության Տրոյային 10.000 «եթովպացիներ»-ից («թխամաշկեր»-ից) և 10.000 էլ ազգությունը չհստակեցված ռազմիկներից, ինչպես նաև 200 մարտակառքերից կազմված մի բավականին ազդու բանակով[3]: Նախորդ հեղինակից զատ այս մասին, թեև ավելի համառոտ, հայտնում է նաև Պլատոնը[4]: Մեմնոնը Տրոյայի պատերի տակ քաջաբար մարտնչում է, բայց ի վերջո ընկնում է թեսալացիների պատրաստած դարանը և զոհվում: Այլ հեղինակներ այս պատմության վերջը փոխանցում են մի քիչ այլ կերպ և հայտնում են, որ Մեմնոնը սպանում է հունական դյուցազուն Անտիլոքին, բայց ինքը զոհվում է ոչ թե դարանում, այլ Աքիլլեսի հետ մենամարտում: Այս կարծիքին է օրինակ Կվինտուս Զմյուռնացին, որի հեղինակած մի պոեմի համաձայն Մեմնոնը սպանել է 3 աքայացու, բայց զոհվել է Աքիլլեսի դեմ մարտում[5]:

---

[1] Иванчик А. И., Накануне колонизации. Северное Причерноморье и степные кочевники VIII-VII вв. до н. э. в античной литературной традиции, М.,-Берлин 2005, с. 23-25:
[2] Гесиод, Перечень женщин, фр.150 М.-У.
[3] Դիոդորոս Սիկիլացի, Գիրք 2, մաս 22:
[4] Платон, Сочинения в четырех томах, СПб, 2005, с. 167 (http://www.plato.spbu.ru/TEXTS/PLATO/new/Platon3_2.pdf).
[5] Квинт Смирнский. После Гомера II 666-679.

Մեմնոնի մահից հետո Զևսը, տեսնելով Մեմնոնի մայր Հաոս[1] աստվածուհու թափած անմխիթար արցունքները իր զոհված որդու համար (հին հույները հավատում էին, որ վաղորդյան ցողը հենց այս աստվածուհու արցունքներն էին), վերակենդանացնում է Մեմնոնին և դարձնում նրան անմահ: Ընդ որում հետաքրքիր է, որ հենց միայն թեկուզ իր անվամբ սեփական հայականությունը մատնող Հաոս աստվածուհին Տիտանյանների ցեղից էր, որոնցից էր նաև մեր Հայկը: Այսինքն ստացվում է, որ Մեմնոնի առնվազն մայրը հայ էր: Բայց ոչ հայ չէին նաև Մեմնոնի հնարավոր հայերը: Այսպես, և Մեմնոնի «պաշտոնական» հոր՝ «արիմներ»-ի առաջնորդ Տիֆոնի, և Հաոսի երկար տարիների սիրեկան, մեր Հայկ Աղեղնաձիգին նույնացող Օրիոնի[2] առկայությունը ցանկացած դեպքում վկայում են, որ Մեմնոնի հայրը ևս եղել է հայ:

Ընդ որում հատկանշական է, որ «Մեմնոն»-ը իրականում անուն չէ, այլ ընդամենը մի բառ է, որը թարգմանաբար նշանակում է. «Արևելքի տիրակալ»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արիական տերության գոյության շրջանում ողջ Մերձավոր և Միջին Արևելքը փաստացի գտնվում էր Հայկազունիների տիրապետության տակ, որոնք էլ ըստ երևույթին ավանդաբար պահպանել էին երբեմնի իրական քաղաքական նշանակություն ունեցած իրենց տիտղոսը, «Մեմնոն» անունը, որով Արմենիի տիրակալ և Հայկազունիների իրավահաջորդ Զարմայրը հայտնի է դարձել հույներին, ավելի քան բացատրելի է:

Եվ այսպես.

- «եթովպացի» տերմինը մինչև VI դարը իրականում հավասար էր «թխամաշկ» հասկացությանը,
- «Մեմնոն»-ը հատուկ անուն չէ և թարգմանաբար նշանակում է. «Արևելքի տիրակալ»,
- Զարմայրը գլխավորել է «թխամաշկեր»-ի բանակը,
- «թխամաշկեր»-ի առաջնորդը Հաոս աստվածուհու, այսինքն՝ հայուհու որդի էր,
- «թխամաշկեր»-ի առաջնորդի հայրության հնարավոր երկու թեկնածուներն էլ անխզելի կապ ունեին հայերի հետ,
- Հայկը հայերի գլխավոր աստվածն էր,
- Տիֆոնը «արիմներ»-ի առաջնորդն էր,
- Մեմնոնի «պաշտոնական» հայրը Տիֆոնն էր,
- «թխամաշկեր»-ի առաջնորդը շատ գեղեցիկ էր,
- հայերն ունեցել են ընդգծված գեղեցկության տեր արքա, որն աստվածացվել է,

---

[1] Այս աստվածուհու անունը բխեցվում է նախահնդեվրոպական h-aus-os արմատից:

[2] Псевдо-Аполлодор. Мифологическая библиотека, Л. 1972, I 4, 4: Կարծում ենք, որ անունը ի սկզբանե ունեցել է «Արիան» ձևը և նշանակել է արիների (հայերի) գլխավոր աստծուն՝ Հայկ Աղեղնաձիգին:

- «թխամաշկեր»-ի առաջնորդը զոհվում է Տրոյայի պատերի տակ՝ Աքիլլեսի դեմ մենամարտում կամ թեսալացիների պատրաստած դարանում,
- Զարմայրը, ըստ ենթադրություն-ցանկության, զոհվել է Աքիլլեսի դեմ մենամարտում,
- «թխամաշկեր»-ի առաջնորդը վերակենդանանում է,
- հայերն ունեն մահացող և վերակենդանացող, ընդգծված գեղեցկության տեր աստված,
- «թխամաշկեր»-ի առաջնորդը իր բանակը Տրոյա է տարել Փոքր Ասիայով, սակայն, թեև Տրոյա է ժամանել արևելքից, բայց նա չի եկել Փռյուգիայից կամ Կապադովկիայից,
- Մեմնոնը մասնակցել է Տրոյայի պաշտպանությանը, ընդ որում այդ դերը ստանձնել է Ասորեստանի արքա «Տևտամոս»-ի հանձնարարությամբ,
- Զարմայրը մասնակցել է Տրոյայի պաշտպանությանը, ընդ որում այդ դերը ստանձնել է Ասորեստանի արքա «Տևտամոս»-ի հանձնարարությամբ:

Հաշվի առնելով այս ամենը, կարելի է գալ համարձակ հետևության, որ փաստորեն ոչ միայն Խորենացին է հայտնում Զարմայրի մասին, այլ նաև Տրոյական պատերազմին Արմենիի արքայի մասնակցության մասին հարուստ տեղեկություններ են տալիս նաև հունական աղբյուրները[1]: Պարզ է դառնում, որ Զարմայրը ևս, որը հաշվի առնելով «Ծովի ժողովուրդներ»-ի արշավանքի աննախադեպ չափերը, իր և ասորեստանցիների ուժերով օգնում էր Տրոյային, նպատակ ունենալով արգելակել ներխուժողների հնարավոր հետագա արշավանքը դեպի Հայաստան և Ասորեստան, զոհվել է հենց ճշգրիտ այն տարում, երբ ընկել է Տրոյան:

Այսպիսով Զարմայրի վերաբերյալ առկա տեղեկատվությունը ևս բոլոր ծանրակշիռ հիմքերը տալիս է ասելու, որ Մովսես Խորենացու և Միքայել Չամչյանի կողմից փոխանցվող տվյալները չափազանց մոտ են ճշմարտությանը:

---

[1] Հատկանշական է, որ այս իրադարձություններում Հոմերոսը հայերին հիշատակում է ոչ թե որպես աքայացիների դաշնակիցներ, ինչը բնական կլիներ սպասել տխրահռչակ «Միգրացիոն տեսության» հիմնավորված լինելու դեպքում, այլ՝ որպես Տրոյայի պաշտպաններ ու Բալկանյան թերակղզուց ներխուժած աքայացիների հակառակորդներ:

Գլուխ 13
Շավարշ II-ից մինչև Ամբակ II (մ.թ.ա. 1180-883)

Շավարշ II-ից մինչև Ամբակ II Հայկազունի արքաների մասին շատ բան հայտնի չէ: Հայկազունիների իշխանությունը Հայաստանում շարունակում էր կրել խորհրդանշական բնույթ, իսկ առաջին դերերում, որպես հետնորդ քաղաքական ասպարեզից հեռացած Միտանիի և Հայա(սա)յի թագավորությունների, աստիճանաբար հայտնվում էր Արարատյան թագավորությունը: Այնուհանդերձ կարծում ենք, որ այստեղ ևս կարիք կա մի շարք պարզաբանումների:

Մխիթար Այրիվանցին, խոսելով Պերճի մասին[1], հայտնում է, որ նա ապրեց Իսրայել-Հուդայի թագավորության արքա Դավթի օրոք: Սակայն Միխիթար Այրիվանցու աշխատության այդ մասի ուսումնասիրումից պարզ է դառնում, որ նա, ի դեպ հիմնվելով Մովսես Խորենացու վրա, վերոհիշյալ Պերճի անվան տակ նույնացրել է երկու տարբեր անձնավորությունների՝ Պերճ I-ին (մ.թ.ա. 1137-1102) և նրա թոռ Պերճ II-ին (մ.թ.ա. 1075-1035): Ընդ որում հենց այս պատճառով էլ զգալով, որ այս «միացյալ Պերճ»-ը ինչ-որ «չափազանց շատ է ապրել»[2], Այրիվանցին նրան կոչել է Երկարակյաց: Սակայն իրականությունը թվում է այլ է, քանզի ըստ Չամչյանի նախ Զարմայրից հետո թագավորել է Շավարշ II-ը, իսկ հետո՝ գոյություն են ունեցել «Պերճ» անունով երկու արքաներ՝ պապ և թոռ: Ակնհայտ է, որ խոսքը այստեղ վերաբերվում է Պերճ II-ին (մ.թ.ա. 1075-1035), որը թեև մի քանի տասնամյակ շուտ է թագավորել, քան Իսրայել-Հուդայի թագավորության արքա Դավիթը (մ.թ.ա. մոտ 1012-972), սակայն այս անգամ մեր հեղինակի խոսքերը պետք է հասկանալ այն իմաստով, որ նա նկատի ունի ժամանակակիցություն ոչ թե ըստ գահակալման տարիների, այլ ըստ երկու անձնավորությունների *ապրած ժամանակի:* Բանն այն է, որ մեր Պերճ II-ի թագավորության վերջին տարիները գրեթե համընկնում են դեռևս արքա չդարձած Դավթի կյանքի սկզբնական տարիների հետ (Դավիթը արքա դարձավ 20 տարեկանում՝ այսինքն ծնվել էր մ.թ.ա. մոտ 1032 թ-ին) և այստեղ «օրոք» խոսքը կրկին, իհարկե որոշակի վերապահումով, նկատի ունենալով ավելի շուտ «դարաշրջանային համընկնում»-ը, տեղին է:

Ասորեստանի արքա Թուկուլտի-Նինուրտա II-ը (մ.թ.ա. 890-884), մ.թ.ա. 885 թ-ին Տիգրիսի գետահովիտ-Ծոփքի սահման երթուղով իրականացնելով հերթական արշավանքը, մ.թ.ա. 885 թ-ի Ամիդի ճակատամարտում ընդհարվում է մի բանակի հետ, որի առաջնորդի անունը իր

---

[1] Մխիթար Այրիվանցի «Ժամանակագրական պատմություն» (ռուսերեն), ՍՊԲ 1869:

[2] Խորենացին, ինչպես նաև Այրիվանցին չեն նշում Շավարշ II-ին (մ.թ.ա. 1180-1137) և նրանց մոտ «միացյալ Պերճը» անմիջապես հաջորդում է Զարմայրին (մ.թ.ա. 1194-1180), իսկ իրեն էլ, ըստ Խորենացու, հաջորդում է Արբունը (մ.թ.ա. 1102-1075):

թողած արձանագրություններում նշում է որպես Ամբելա: Նույն Ամբելայի մասին հայտնում է նաև Ասորեստանի հաջորդ արքա Ասսուրնաձիրպալ II-ը (մ.թ.ա. 884-860) Նեմրութ-Կալախում գտնված տաճարի ավերակների վրա թողած արձանագրության երկրորդ սյունակում՝ ճանաչելով նրան «Զաման»-ի (գուցե «Արմանի»-ի) արքա: Այս Ամբելան ևս կրկին զարմանալի ճշգրտությամբ համընկնում և անկասկած նույնանում է Արմենիում այդ ժամանակ ըստ Չամչյանի (Խորենացին նրան չի հիշատակում) իշխող Ամբակ II-ի հետ (մ.թ.ա. 910-883):

Գլուխ 14
Կախպակից մինչև Փառնակ II (մ.թ.ա. 883-765)

Մ.թ.ա. IX դարում Արարատյան թագավորությունը, շնորհիվ տաղանդաշատ Արամ II-ի[1] (մ.թ.ա. 883-840) վարած եռանդուն քաղաքականության, այնքան ամրապնդվեց, որ մի քանի տասնամյակ հետո նրա հաջորդները իրենց գերագահության տակ միավորեցին նաև Արմենիի թագավորությունն ու ստեղծեցին արդեն գրեթե ողջ Հայաստանն ընդգրկող հզոր և միացյալ մի թագավորություն, հայոց մի պետություն, որին հավասար, մասշտաբների տեսակետից, դեռևս չէր եղել Հայաստանում Արիական տերության ու Հայոց թագավորության փլուզումից հետո, և որը հաջորդ հարյուրամյակում պետք է ստեղծեր Հայկական Չորրորդ գերիշխանությունը: Արարատյան թագավորության կազմում Արմենիի միավորվելուց հետո Հայաստանում գերագահությունն արդեն նաև դե-յուրե անցավ Արարատյան գահակալներին, թեև Արմենիում շարունակում էին կառավարել Հայկազունիները: Վերջիններս, չհամակերպվելով այս փաստի հետ, հաճախ էին ընդվզում Արարատյան տիրակալների դեմ (մ.թ.ա. 771, 761, 751, 673, 656 թթ.):

Այսպիսով, այն բանից հետո, երբ լայնածավալ նվաճումներ սկսած և եռանդուն քաղաքականություն վարող Արարատյան թագավորության հզոր արքա Սարդուր II-ը (մ.թ.ա. 765-735) իր գահ բարձրանալուց անմիջապես հետո, օգտվելով Փառնակ II-ի (մ.թ.ա. 805-765) մահից, վերջնականապես իր գերագահությունը հաստատեց նաև Արմենիում և այն մտցրեց Արարատյան թագավորության կազմի մեջ, պետք է դադարած համարել Արմենիի Հայկազունիների արքայացանկի հիշատակումը, ինչը, սակայն, ամենևին չի նշանակում, թե տոհմը վերացել է (ուղղակի այն դադարել է արքայական տիտղոս կրել), և այն պետք է կրկին վերսկսած համարել մ.թ.ա. 673 թ-ից, երբ, չնայած Արարատյան թագավորության և Ասորեստանի արշավանքին, Արմենին Հսկայի (մ.թ.ա. 673-664) օրոք ձեռք բերեց անկախություն՝ վերջնականապես դուրս գալով Արարատյան թագավորության կազմից մ.թ.ա. 656 թ-ին: Այս թվականից սկսած տեղում իշխող Հայկազունիները կրկին սկսեցին կրել արքայական տիտղոսներ:

---

[1] Հայոց թագավորության նույն անունը կրող արքաներին տարբերակող հերթական համարների հարցը գրականության մեջ դեռևս միանշանակ լուծում չի ստացել: Տարբեր մասնագետներ առաջարկվում են տարբեր համակարգեր: Ընդ որում յուրաքանչյուր համակարգ, հիմք ընդունելով Հայոց թագավորության սկզբնավորման իր ժամանակը, սեփական ցուցակի մեջ մտցնում կամ հանում է որևէ մի արքայի: Տողերիս հեղինակը հիմք է ընդունել արքայի դե-ֆակտո համահայկական նշանակությունն ունենալը և ոչ միայն «դե-յուրե» այլ նաև ավելի շատ դե-ֆակտո «Հայոց թագավոր» լինելու հանգամանքը: Հարցին մոտենալով այս տեսանկյունից և հաշվի առնելով Արամ I Մեծի առկայությունը, կարծում ենք որ լիովին արդարացի ու հիմնավորված է համահայկական հերթական այս պետության արքա «Արամե»-ին կոչել Արամ II:

Վերը նշված հանգամանքը, կարծում ենք, մեզ օգնում է լուսաբանել Հայոց հնագույն պատմության ամենամեծ հանելուկներից ևս մեկն ու պատասխանել այն հարցին, թե այդ ***ինչպե՞ս հանկարծ ստացվեց, որ Արարատյան թագավորության փայլուն ժամանակաշրջանը և նրա հզոր արքաները Մովսես Խորենացու երկում նույնիսկ ակնարկված էլ չեն:*** Այս կապակցությամբ կարծում ենք, որ խնդիրը դրված է քաղաքական հարթության վրա, որն էլ իր արտացոլումն է գտել պատմական երկերում:

Մ.թ.ա. IX դարում, երբ Արարատյան գահակալները սկսեցին հավակնել գերիշխանության համահայաստանյան մակարդակով, վերջիններս լուրջ հակասությունների մեջ մտան Արմենիում ժառանգաբար իշխել շարունակող Հայկազունիների հետ: Ճիշտ է, ինչպես արդեն ասվեց, մ.թ.ա. XVII դարի կեսերից սկսած Հայկազունիների գերագահությունը Հայաստանում մեծապես ձևական բնույթ էր կրում, բայց այնուհանդերձ բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ այն պահպանվում էր և Արմենիի Հայկազունիները, ի տարբերություն նույն Մերովինգների, չէին համակերպվել իրավիճակի հետ ու միայն հարմար առիթի էին սպասում իր միասնականությունը կորցրած Հայոց թագավորությունը իրենց ղեկավարությամբ կրկին միավորելու համար: Սակայն սկզբում տեղի ունեցավ հակառակը և համահայաստանյան գերիշխանության ձգտող Արարատյան թագավորության գահակալները մ.թ.ա. 765 թ-ին ոչ միայն գործնականում հենց իրենք միավորեցին Հայաստանը, այլև՝ իրենց ուղղակի գերիշխանությունը տարածեցին նաև Արմենիի վրա: Արդեն ասվել է, թե ինչ աստիճան անհանդուրժող էին տրամադրությունները Արմենիում Արարատյան գահակալների նկատմամբ և պատահական չէ, որ այս թագավորությունը Արարատյան թագավորության կենտրոնական իշխանության դեմ ամենահամառ պայքար մղած թագավորությունների կամ իշխանությունների շարքում էր:

Իրավիճակը փոխվեց մ.թ.ա. VII դարի երկրորդ կեսին, երբ Արմենիի գահակալները, օգտվելով Արարատյան թագավորության գահակալների քաղաքական թուլությունից, ի վերջո կարողացան դե-ֆակտո վերականգնել իրենց գերագահությունը Հայաստանում, իսկ մ.թ.ա. 612 թ-ին էլ հասան այդ իրավունքի միջազգային ճանաչմանը[1]: Ակնհայտ է, սակայն, որ նույնիսկ դրանից հետո էլ Հայկազունիները չէին կարող թույլ տալ իրենց մոռանալ երկար դարեր տևած տոհմական թշնամությունը, մանավանդ որ քաղաքական տեսակետից ևս դա չէր կարող ճիշտ համարվել: Արդյունքում Արարատյան թագավորության գերագահության տարիները և նույնիսկ գահակալների հիշատակը ենթարկվեցին գիտակցական մոռացության, ինչն էլ իր արտացոլումը գտավ կրկին ամբողջովին Հայկազունիների հսկողության տակ վերադարձած պաշտոնական (մեհյանական) պատմագրությունում: Ընդ որում Արարատյան գահակալների և Արարատյան դարաշրջանի նկատմամբ ատելությունը Հայկազունիների մոտ ակնհայտորեն այնքան ուժեղ էր, որ

[1] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 21:

վերջիններս խուսափեցին հենց նոր ավարտված դարաշրջանին նույնիսկ բացասական պատմական արտացոլում տալուց:

Արդյունքում ստեղծվեց մի իրավիճակ, երբ հայոց գրավոր-մատենագիր պատմագրությունը հաջողությամբ «մոռացավ» սեփական պատմության կարևորագույն դարաշրջաններից մեկը[1]:

[1] Հարկ է ավելացնել, որ այստեղ մենք գործ չունենք ինչ-որ մի ինքնին բացառիկ երևույթի հետ: Լրիվ նույն կերպ Սասանյանների պաշտոնական պատմագրությունը իր ժամանակին հաջողությամբ «մոռացավ» հետաքեմենյան հսկայական դարաշրջանը ու հատկապես Պարթևական երկարատև թագավորության գոյության փաստը (մ.թ.ա. 331 - մ.թ. 226 թվականներ):

Գլուխ 15
Հսկայից մինչև Հրաչյա (մ.թ.ա. 673-590)

Մ.թ.ա. 656 թ-ին Հայկազունիները վերջնականապես անջատվեցին Արարատյան թագավորությունից, իսկ մ.թ.ա. 612 թ-ին էլ հասան նրան, որ Հայաստանի նկատմամբ դե-ֆակտո արդեն կես դար իրենց պատկանող գերագահությունը ստացավ նաև միջազգային կամ դե-յուրե ճանաչում: Արդյունքում Արմենին, դառնալով Արարատյան թագավորության քաղաքական հետնորդը, կրկին իր տիրապետության տակ միավորեց Հայաստանի մեծագույն մասը: Պատահական չէ, որ այս դեպքերից հետո ոչ ուշ, քան երկու տասնամյակ անց միջազգային հարաբերություններում «Արարատ կամ Արարատյան թագավորություն» հասկացությանը փոխարինում է «Արմենի(ա) կամ Արմենիայի թագավորություն» հասկացությունը[1]: Այս կապակցությամբ պետք է կրկին անդրադառնալ Միքայել Չամչյանի բերած Հայկազունիների արքայացանկին:

Ուշադիր ուսումնասիրությունը այս անգամ մեզ բերում է հետևության, որ այստեղ Չամչյանը առաջին անգամ որոշակիորեն սխալվել է: Մասնավորապես, Հսկան և նրա որդի Պարույր Հսկայորդին Միքայել Չամչյանի մոտ տեղավորված են մ.թ.ա. 765-700 թ-երին, որից հետո առաջ են բերված նաև Արմենիի հաջորդ գահակալների կառավարման տարիները: Սակայն անառարկելի է, որ Պարույր Հսկայորդին (մ.թ.ա. 656-612)[2] ըստ Մովսես Խորենացու մասնակցել է Նինվեի գրավմանը, ինչը տեղի է ունեցել մ.թ.ա. 612 թ-ին[3]:

Չամչյանի մասամբ սխալվելը իմ կարծիքով բացատրվում է նրանով, որ վաստակաշատ մխիթարիստին հայտնի չի եղել վերևում արդեն իսկ քննարկված պատճառներով Արարատյան թագավորության «մոռացված» լինելու հանգամանքը և նրա թվացել է, թե Հայկազունիները գերագահության իրավունքով շարունակել են իշխել Հայաստանում անընդհատ: Սակայն Չամչյանը կամ այն աղբյուրը, որից նա օգտվել է, հաշվի չեն առել, որ նախ Հայկազունիները քննարկվող ժամանակաշրջանում դե-ֆակտո իշխել են Հայաստանի միայն մի մասում (Արմենիում), և հետո՝ որ նրանց արքայական իշխանությունը, ինչպես արդեն ասվեց, Փառնակ II-ի (մ.թ.ա. 805-765) մահից հետո վերացել է 92 տարով:

---

[1] Աստվածաշունչ, Երեմիա, գլուխ 51, մաս 27: Ինչպես և նախորդ օրինակում, նույն տերմինը, որպես փոխարինող «Արարատ» տերմինին, հանդիպում է նաև Բեհիստունյան արձանագրությունում:

[2] Մ.թ.ա. 664-656 թվականներին Արմենին մի վերջին անգամ ենթարկվեց Արարատյան թագավորությանը և այստեղ իշխեց Անդարի զորավարը:

[3] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 21:

Այսպիսով, հաշվի առնելով Հայկազունիների կողմից համահայաստանյան գերիշխանության դե-յուրե կորստի ժամանակաշրջանը, հիմք ընդունելով Արմենիի կողմից կրկին անկախության նվաճման տարեթիվն ու հաշվելով Հայկազունի հերթական արքաների իշխելու թվականները ըստ Չամչյանի փոխանցած փաստացի տարիների՝ պարզվում է, որ ամեն ինչ կրկին իր տեղն է գտնում համաշխարհային-պատմական իրադարձությունների ֆոնին:

Եվ այսպես, Հայկազունիների գահացանկը հիշյալ ժամանակաշրջանում ունի հետևյալ տեսքը.

1. Հսկա (մ.թ.ա. 673-664)
2. *Անդարի զորավար* *(մ.թ.ա.664-656)*
3. Պարույր Հսկայորդի Հսկայի որդի (մ.թ.ա. 656-612)
4. Հրաչյա որդի (մ.թ.ա. 612-590)

Համաձայն Մովսես Խորենացու՝ Պարույր Հսկայորդին մասնակցել է Նինվեի գրավմանը, որը տեղի է ունեցել մ.թ.ա. 612 թ-ին: Ընդ որում ըստ Պատմահոր այս արքան ժամանակակիցն է եղել Մարական թագավորության արքա Կիաքսարին , ինչպես նաև Բաբելոնի արքա Նաբոպալասարին (մ.թ.ա. 626-605): Այսպիսով Պարույր Հսկայորդու գահակալման տարիները կրկին լիովին համապատասխանում են Ասորեստանի անկման հետ կապված իրադարձություններին: Հատկանշական է, որ նույն իրավիճակն է նաև Արմենիի հաջորդ արքայի՝ Հրաչյայի, պարագայում, որը ժամանակակիցն է Բաբելոնի արքա Նաբուգոդոնասորին (մ.թ.ա. 605-556)[1]:

[1] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 22:

Գլուխ 16
Փառնվազ II-ից մինչև Վահե (մ.թ.ա. 590-331)

Դատելով ըստ ամենայնի՝ Փառնվազ II-ից մինչև Հայկակ II-ը ներառյալ Արմենիում 21 տարով (մ.թ.ա. 590-569) հաստատվել է խառն ու անկայուն վիճակ, երբ երկրի տարբեր մասերում միաժամանակ իշխել են մի քանի արքաներ: Անուղղակի կերպով այս հետևությունը կարող են հաստատել օրինակ Քսենոֆոնի տեղեկությունները, ըստ որի Երվանդ I Սակավակյացի (մ.թ.ա. 569 - մոտ 552, 565 - մոտ 552՝ ձևականորեն[1]) իշխանությունը հիմնականում տարածվում էր միայն Հայոց թագավորության հարավային շրջանների վրա[2]: Կարծում ենք, որ Փառնվազ II-ը (մ.թ.ա. 590-569՝ մի մասում), Պաճույճը (մ.թ.ա. 590-577՝ մի մասում), Կոռնակը (մ.թ.ա. 590-535՝ մի մասում), Փավոսը (մ.թ.ա. 590-582՝ մի մասում) և Հայկակ II-ը (մ.թ.ա. 590-554՝ մի մասում) այս կամ այն պատճառով գահակալել են միմյանց զուգահեռ կամ էլ առնվազն գոնե ձևականորեն հավակնել են Հայոց թագավորության գահին: Իհարկե, ընդունում ենք, որ այս ամենը, հիմք ունենալով ընդամենը միայն Քսենոֆոնի մի քանի ակնարկները, մեծապես մնում է ենթադրության մակարդակին, սակայն այլ բավարար բացատրություն առայժմ չկա, քանի որ հաստատ են և Հրաչյայի (մ.թ.ա. 612-590) գահակալության ավարտի, և Երվանդ I Սակավակյացի գահակալության սկզբի տարիները:

Երվանդ I Սակավակյացի և Տիգրան I-ի (մ.թ.ա. 569-565՝ գահակից, 565-522) գահակալման տարիները ևս լիովին համապատասխանում են այլ աղբյուրներից հայտնի իր ժամանակի քաղաքական իրադարձությունների պատկերին: Մասնավորապես, Քսենոֆոնի կողմից «Կյուրոպեդիա»-ում հայտնվող տվյալները իրենց լիակատար հաստատումն են ստանում և Մովսես Խորենացու կողմից հայտնված տեղեկություններով, և Միքայել Չամչյանի կողմից նշվող գահակալման տարիներով: Խնդիրը բավականին քննարկված է ու երևի թե այստեղ կարիք էլ չկա այն ենթարկել առանձնահատուկ վերլուծության[3]: Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ թերևս միայն «Երվանդունիների հիմնխանդրին»:

Ընդունված է կարծել, որ մ.թ.ա. VI դարի կեսերից սկսած Հայոց թագավորությունում իշխանության է եկել մի տոհմ, որն անվանել է «Երվանդունիներ» անունով: Այս պնդումը, սակայն, իր հիմքում ունի թերուս միայն հայտնի հաղորդումը Երվանդ I Սակավակյացի տիրապետության մասին և հիմնված է այս արքայի զուտ անվան վրա: Սակայն միայն այս

---

[1] Հաշվի առնելով մ.թ.ա. 565 թ-ով թվագրվող Կյուրոսի արշավանքը դեպի Հայաստան և այդ ընթացքում Տիգրանի ակտիվ դերակատարությունը՝ կարելի է ենթադրել, որ հոր թագավորության վերջին տարիներին Տիգրանը եղել է նրա գահակիցը:

[2] Քսենոֆոն «Կյուրոպեդիա, Երևան, 2000, գիրք 3:

[3] Քսենոֆոն «Կյուրոպեդիա, Երևան, 2000:

հանգամանքը հիմք ընդունելով հետևություններ անել անձի տոհմական պատկանելիության մասին սխալ է: Օրինակ, Ֆրանսիայում տիրել են «Լյուդովիկոս» («Լուի») անունով 18 արքաներ, որոնք, սակայն, պատկանել են արքայական չորս տարբեր գահատոհմերի: Այսինքն զուտ «Երվանդ» անունով արքայի առկայության պարագայում խոսել գահատոհմի փոփոխության մասին կարծում ենք հիմնավոր չէ և այս պարագայում Խորենացու տեղեկությունները այն մասին, որ Հայոց թագավորությունում շարունակել են իշխել Հայկազունիները, կրկին արժանահավատ են:

Կարելի է կարծել, որ, այն բանից հետո, երբ մ.թ.ա. 521 թ-ին Արմենիի թագավորությունը բաժանվեց երեք մասի և Հայկազունիների գլխավորած Մեծ Հայքի թագավորությունից զատ առաջացան նաև արդեն որպես սատրապություններ հանդես եկող Փոքր Հայքն ու Կիլիկիան, իսկ Մեծ Հայքի թագավորությունն էլ Մարաստանի ու Պարսից թագավորությունների հետ միասին կազմեց Աքեմենյանների տերության հենասյունները ներկայացնող Արիական եռադաշինքը[1], Փոքր Հայքում շարունակեցին իշխել այն անձիք, որոնք իրականում եղել են սատրապներ և հաճախ սխալմամբ համարվել են իշխած ողջ Հայաստանում (Հիդարնես I (մ.թ.ա. 519 - մոտ 500), Հիդարնես II (մ.թ.ա. մոտ 500-460), Հիդարնես III (մ.թ.ա. մոտ 460-430), Արտաշիր (մ.թ.ա. մոտ 430 - ուղ. 404), Երվանդ (մ.թ.ա. 404-360), Դարեհ Կոդոմանոս (մ.թ.ա. 360-337), Միթրդատ (մ.թ.ա. 337-331, մ.թ.ա. 331 - մոտ 323՝ Փոքր Հայքի արքա)), իսկ Մեծ Հայքում իշխանությունը շարունակեց պատկանել Հայկազունիներին:

Վերջում ավելացնենք միայն, որ իրենց լիովին հիմնավորված տեղերում են նաև և որպես Վիշապաքաղ հայտնի Հայոց արքա Վահագնը (մ.թ.ա. 522-493), և վերջին Հայկազունի արքա Վահեն (մ.թ.ա. 351-331): Վահագն արքան հայտնի է ամենից առաջ որպես ռազմի և քաջության աստվածացված մի կերպար, ինչն ամենևին էլ զարմանալի չէ, հաշվի առնելով, որ հենց այս արքայի օրոք ընթացավ Բեհիստունյան արձանագրությունում իր արտացոլումը գտած Հայ-Պարսկական I պատերազմը (մ.թ.ա. 521-520): Այս պատերազմի հիմնական իրադարձությունները գրականության մեջ լայնորեն քննարկված են այդ թվում նաև տողերիս հեղինակի կողմից[2] և այստեղ կարիք չկա դրանց նորից անդրադառնալու: Ավելացնենք միայն, որ ժամանակակիցների վրա հսկայական տպավորություն թողած հենց այս իրադարձությունները հիմք հանդիսացան քաջարի այս արքայի աստվածացման համար, ընդ որում աստվածացման՝ հենց «ռազմական ուղղվածությամբ»:

Ինչ վերաբերվում Վահեին, որի գահակալման ժամկետը, ըստ Միքայել Չամչյանի, վերջանում է մ.թ.ա. 331 թ-ին, ապա ամեն ինչ կրկին իր ճշգրիտ հաստատումն է ստանում և վերջնականապես հաստատում է և

---

[1] Մանրամասն տես՝ Օհանյան Մ. Ս., Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Երևան, 2003:

[2] Տես՝ Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 4, Երևան, 2007, էջ 20-21:

Մովսես Խորենացու և Միքայել Չամչյանի արտահայտած դիրքորոշումների հիմնավորվածությունը. հենց մ.թ.ա. 331 թ-ին էր, որ, համաձան Մովսես Խորենացու, Վահե արքան ընկավ Ալեքսանդր Մակեդոնացու դեմ տրված ճակատամարտերից մեկում[1], որից հետո Հայկազունիների տոհմը սպառվեց և Մեծ Հայքի արքա հռչակվեց Գավգամելայի ճակատամարտում աչքի ընկած Երվանդը՝ Երվանդ II-ը (մ.թ.ա. 331 - մոտ 323)՝ Երվանդունիների արքայական գահատոհմի իրական հիմնադիրը[2]:

---

[1] Մովսես Խորենացի, Գիրք 1, գլուխ 31: Այս կապակցությամբ արտահայտվել են տարբեր կարծիքներ և մասնավորապես մատնանշվել է Իսոսի ճակատամարտը, որոնք, սակայն, քննարկվող թեմայի տեսանկյունից էական չեն: Մեր կարծիքով Հայկազունի վերջին արքան զոհվել է մ.թ.ա. 331 թ-ի հոկտեմբերի 1-ի Գավգամելայի ճակատամարտում:

[2] Գահատոհմը զբաղեցրել է Մեծ Հայքի թագավորության գահը մ.թ.ա. 331 - մոտ 247 և 212-201 թվականներին:

Վերջաբանի փոխարեն

Սույն գրքում փորձ արվեց վերականգնել Հայկազունիների ակնառու տոհմի պատմությունը և, կիրառելով մեր կողմից առաջարկված Համադրման մեթոդը, ցույց տալ վերջինիս իրական տեղն ու դերը տարածաշրջանի պատմության համայնապատկերում: Աշխատանքում ցույց տրվեց, որ, որոշակի ճշգրտումներով, իրական-պատմական են ոչ միայն Հայկազունի արքաները, այլև իրականությանը համապատասխանում են նաև Միքայել Չամչյանի կողմից մատնանշված՝ նրանց գահակալության տարիները:

Սիեր Հակոբյան
Երևան
05.05.2012 թ.

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ. «Երկեր», հատոր 1, Երևան 1966,
2. Ադոնց Ն. «Հայոց պատմությունը», Երևան 1972,
3. Ալիշան Ղ. «Հին հավատք կամ հեթանոսական կրոն հայոց», Վենետիկ 1895,
4. Այվազյան Ա. Ա. «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն», Երևան 1998,
5. Անտոնյան Գ. Մ. «Ադամից Հայկ ու մինչև Վահե», Երևան 2010
6. Աստվածաշունչ, Երևան 1990
7. Ավետիսյան Հ. Մ. «Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IX դդ», Երևան 2002,
8. Գրիգորյան Գ. «Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը», գիրք 1, Երևան 1972,
9. Դիոդոր Սիկիլացի «Պատմական գրադարան», Երևան 1985,
10. Զարբհանալյան Գ. «Մատենադարան հայկական թարգմանությանց նախնյաց», Վենետիկ 1889,
11. Իշխանյան Ռ. Ա. «Հայ ժողովրդի ծագման և հնագույն պատմության հարցեր», Երևան 1988,
12. Իշխանյան Ռ. Ա. «Պատկերազարդ պատմություն հայոց» գիրք Ա, Երևան 1990,
13. Հակոբյան Մ. Ի. «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 1», Երևան 2007,
14. Հակոբյան Մ. Ի. «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 2», Երևան 2007,
15. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1968,
16. Հովսեփ Ֆլավիոս «Ընդդեմ Ապիոնի», Երևան 1976,
17. Հովսեփ Ֆլավիոս «Հուդայական հնություններ», (ռուսերեն), ՍՊԲ 1900,
18. Հովսեփ Ֆլավիոս «Հուդայական ժողովրդի հնության մասին», (ռուսերեն), ՍՊԲ 1895,
19. Խաչատրյան Վ. Ն. «Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում», Երևան 1998,
20. Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 1-3, Երևան 1945-1957,
21. Մելիք-Բախշյան Ս. Տ. «Հայ ժողովրդի պատմություն», Երևան 1963,
22. Մխիթար Այրիվանցի «Ժամանակագրական պատմություն» (ռուսերեն), ՍՊԲ 1869,
23. Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», Երևան 1969,
24. Մովսիսյան Ա. Ե. «Բարեպաշտ արքաների աշխարհակալություն: Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ», Երևան 1997,
25. Մովսիսյան Ա. Ե. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների)», Երևան 2005,
26. Մովսիսյան Ա. Ե. «Հայոց պատմության աշխարհակալությունները», Երևան 2008,
27. Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», Երևան 1997,
28. Չամչյան Մ. «Հայոց պատմություն», Երևան 1985,
29. Վարդան Արևելցի «Համընդհանուր պատմություն» (ռուսերեն), Մոսկվա 1861,
30. Վարդանյան Վ. Մ. «Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը», Երևան 1969
31. Վարպետյան Ա. Ս. «Ովքեր են ի վերջո արիացիները», Մարսել 1989,
32. Տերյան Ա. «Միտանի Հայոց հնագույն պետությունը», Երևան 2006,
33. Ուլուբաբյան Բ. Ա. «Զրուցարան», Երևան 1991,
34. Քոսյան Ա. Վ. «Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների)», Երևան 2004,
35. Քսենոֆոն «Կյուրոպեդիա», Երևան 2000,
36. Օհանյան Մ. Ս. «Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը», Երևան 2003
37. Акимова Л. И. “Гениальный Никто”, Киев, 2001
38. Айвазян С. М. “История России: Армянский след”, Москва 1997,
39. Бонгард-Левин Г. М. “История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации. Часть 2. Передняя Азия. Египет”, Москва 1988,

40. Гардон Ч. “Арийцы. Основатели европейской цивилизации”, Москва 2007,
41. Джаукян Г. Б., Сараджиева Л. А., Арутюнян Ц. Г. “Очерки по сравнительной лексикологии армянского языка”, Ереван 1983,
42. Джаукян Г. Б. “Урартский и индоевропейские языки”, Ереван 1963,
43. Дьяконов И. М. “История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации”, Москва 1983,
44. Дьяконов И. М. “Книга воспоминаний”, СПб 1995,
45. Дьяконов И. М “Предыстория армянского народа: (История Армянского нагорья с 1500 по 500 гг. до н. э.: Хурриты, лувийцы, протоармяне)”, Ереван, 1968,
46. Гесиод. Перечень женщин, фр.150 М.-У,
47. Евсевий “Церковная история”, Москва 1982,
48. Зиберман М. “Кто такие гайксосы”, www.hapiru.name.ru 2006,
49. Эмин Н. О. “Династический список Хайкидов”, Москва 1884,
50. Иванов В.В. "Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Вахагну", ИФЖ, N 4, Ереван 1983,
51. Иванчик А. И. “Накануне колонизации. Северное Причерноморье и степные кочевники VIII-VII вв. до н. э. в античной литературной традиции”, Москва-Берлин 2005,
52. История Древнего Востока, Москва 2002,
53. Квинт Смирнский. После Гомера II 666-679,
54. Орозий. История против язычников II 3, 1,
55. Перепелкин Ю. Я. “История древнего Египта”, Москва 2003,
56. Псевдо-Аполлодор. Мифологическая библиотека I 4, 4,
57. Шнирельман В.А. “Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье”, Москва 2003,
58. The International Who's Who. London, 1960 - 97,
59. The International Year Book and Statesmen's Who's Who. London, 1961– 96,
60. Wilcken. In neuer greichischier Roman “Hermes”, 1893, SS,
61. www.antiquitas.ru/arimy-arimi/.
62. www.genealogia.ru/projects/lib/catalog/rulers/1.htm,
63. www.grani.ru/Society/Science/m.138086.html
64. www.psylib.org.ua/books/plato01/30zak03.htm.

Օգտագործված սկզբնաղբյուրներ

1. Անանիա Շիրակացի «Մատենագրություն», Երևան 1979
2. Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», Երևան 1996
3. Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», Երևան 1997
4. Մխիթար Այրիվանեցի «Նետողաց ազգի պատմությունը» (ռուսերեն), Մոսկվա 1871
5. Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», Երևան 2001

Սիեր Հակոբյան

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐ

(Մոռացված մի արքայատոհմ)

Խմբագիր՝ Թ. Հակոբյան
Ձևավորումը՝ Մ. Հակոբյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան

Հեղինակային Հրատարակություն
Երևան-2012

Տպաքանակը՝ 100, Պատվեր՝ 100: Չափսը 60x84 1/16

Հեղինակային Հրատարակություն
Հեռ.՝ (093) 45-80-04
e-mail Lion1700@yandex.ru